



(Բ. Տարի) ՄԱՐՏ 1932

(8^{me} Année) Mars 1932

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական

ՅԱՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

ՄԻՐՈՒԹԻՒՆ

ՍԱՄՈՒԷԼ Պ.

Հոգ. Կեանք

ՔԱՂԱՔԻՆ ՄԷՋ ՍՊԱՍԵԼ

Ազատ Թարգմ. Ն. Մ.

ԱՐԻՒՆ

ՇՆՈՐՀՔ. ՇՆՈՐՀՔ

ԱՆՈՐ ԱՐԵԱՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

Ս. Գրական ուսումնասիրություններ

ԱՍՏՈՒԱԾԱՀՈՒՆԶԸ

Զ. Բ. ՊՈՒՏԱԳԵԱՆ

Կենսագրական

ՕՊԸՐԼԻՆ

X X X

Մանկանց սիւնակ


ԾԱԿՈՒԱԾ ԶԵՌՔԻՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

ՀԱՆԵԼՈՒԿ

Զանազան լուրեր

Արթնցի՛ր դուն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Ե. 14

ԲԱՆԲԵՐ



Ուրեմն ա՛լ վախճանք, որ չըլլայ թէ
Անոր հանգիստը մոռնելու խոստմունքէն որ մեզի մնացեր է,
ծեզմէ մէկը գրկուած գտնուի: Եբր. Դ. 1

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի չուշանայ:

Եբր. Ժ. 37

Ը. ՏԱՐԻ

ՄԱՐՏ 1932

ԹԻԻ 3

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՅԱՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Զորս Աւետարանները երբ կը քննենք, կը տեսնենք թէ յարութենէն առաջ մեր Տէրը միտքը լեցուած էր մէկ կարեւոր խորհուրդով— Մարգկութեան փրկութիւնովը: Կը պատմէ թէ Խնքը երկինքէն իջաւ կորսուածը փնտռելու եւ փրկելու եւ ասոր համար պէտք էր Իրեն բարձրանալ, չարչարուիլ եւ մեռնիլ: Բայց Խնքը մահուան վրայ այնպիսի սարսափով մը չէր խօսեր ինչպէս խօսեցան Իրմէ առաջ եղած բոլոր մարգիկ, վասնզի Խնք զիտէր թէ մեռնելէն յետոյ մահը Իր վրայ չպիտի ախրէր եւ թէ անկարելի էր որ Խնք մահուան կապերէն բռնուէր, Խնքը յարութիւն պիտի առնէր: Ու այս խօսքերը կը խօսէր Նա այնպիսի պարզ ոճով մը, որ պէս թէ յարութիւնը Իրեն համար բնական բան մը ըլլար, և յիշաւ Իր ապրած փառաւոր կեանքին եւ այդ կեանքին ներքին բնութեան բընական ելքն ըլլալու էր յարութիւնը, Անոր սքանչելի կեանքի ընթացքին սքանչելի հետեւութիւնը, ու միթէ կարելի՞ է տարբեր խորհիլ:

Քրիստոսի կեանքին համար բնական եղող այս յարութեան իրողութիւնը իր մէջ մեծ արժեքներ կը ներկայացնէ եւ քրիստոնէական կեանքի ամենակարեւոր հիմը կը կազմէ: Պօղոս առաքեալ իր բոլոր շահը (գիտութիւնը, համբաւը, գիրքը, ազգային հպարտութիւնը, կրօնական ամենաբարձր ըմբռնումները) ու ամէն բաները ազօրեղութիւն ու փնտս կը սեպէր Քրիստոս Յիսուսի գերազանց գիտութեանը համար, ճանչնալու զԱնիկա ու Անոր յարութեանը զօրութիւնը: Այս թանկագին գիտութեան հասնելու համար իր ամբողջ կեանքն ու բարոյական եւ նիւթական ուժերը անխնայ ի սպաս դրած էր:

Կ'արժէ որ մենք եւս այս Զատկական շա-

բաթներուն կրկին համառօտակի ուշադրութեան առնենք Անոր յարութեան կարեւորութիւնը բուն իսկ Իրեն ինչպէս նաեւ մեզի հաւատացեալներուն համար:

ա. Յարութեան կարեւորութիւնը Յիսուսի անմիջ համար.— Աստուած Սուրբ Հոգիին միջոցաւ յարուց խաչեալ եւ մեռած Քրիստոսը, իրաւունք տալով Անոր բոլոր պահանջներուն ու պնդումներուն, որոնք տեղի ունեցան անցեալ երեք ու կէս տարիներու Իր կեանքին ու խօսքերուն մէջ, ըլլայ առ Աստուած, ըլլայ առ մարդս: Անիկա հաստատեց ու կնքեց Որդւոյն բոլոր պահանջները եւ առաւ Անոր աստուածային բարձրագոյն պատիւը երկինքի մէջ և երկրի վերայ, տալով կատարեալ հեղինակութեան իրաւունքը առ աշխարհ (Գործ. Ե. 30): Իր պահանջներէն յետոյ մեռած Քրիստոսի մը պնդումները ինքնին անարժէք պիտի դառնային, բայց յարութիւն առնող եւ կենդանի եղողի մը խօսքերը կատարեալ ամօքութիւն ստացան և մեծ արժէք:

Արդ Աստուած յարութեան իրողութիւնով հաստատեց եւ կնքեց բոլոր աշխարհի առջև Յիսուս Քրիստոսի ծագումը (Մէկը երկինք չելաւ, բայց Անիկա միայն որ երկինքէն իջաւ, Որդին մարդոյ որ երկինքն է Յովհ. Գ. 13): Իրեն հանդէպ Անոր ունեցած դիրքը (Իմ սիրելի Որդիս զրկեմ Ղուկ. Ի. 23: Ես եւ Հայրը մէկ ենք Յովհ. Ժ. 10): Անոր ի հետեւ գոյութիւնը (Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Աբրահամի ըլլալէն առաջ ԵՄ ԵՍ Յովհ. Ը. 38): Անոր նկարագրին բնութիւնը (Չեզմէ ո՞վ կրնայ Ձիս յանդիմանել մեզի համար Յովհ. Ը. 46): Անոր գերազանց պաշտօնը (Որդեակ, քու մեղքերդ քեզի ներուած են Մարկ. Բ. 5: Որդին մարդոյ եկաւ որպէսզի

կորսուածը փնտռէ և փրկէ Ղուկ. ԺԺ. 10: ...Որպէսզի ամէն ով որ Անոր հաւատալի չկորսուի, հապա յաւիտենական կեանք ունենայ): Անոր կեանքին թանկ արժէքը (Ան որ Իմ մարմինս ուտէ եւ Իմ արիւնս խմէ, յաւիտենական կեանք կ'ունենայ ու ես անոր յարութիւն առնել պիտի տամ վերջին օրը Յովհ. 2. 50): Անոր յաղթաւ յազարհի իշխանը կուգայ, եւ Իմ վրաս բան մը չունի Յովհ. ԺԴ. 30: Աշխարհի մէջ նեղութիւն պիտի ունենաք, բայց քաջասիրտ եղէք, ես աշխարհի յաղթեցի Յովհ. 2. 33): Անոր ապագայ դիրքն ու թագաւորութիւնը (Ասկէ ետեւ Որդին մարդոյ Աստուծոյ զօրութեան աջ կողմը պիտի նստի Ղուկ. ԻԲ. 69: Հայրը մէկը չդատեր, հապա ամէն դատաստանը Որդոյն տուաւ . . . եւ դատաստան ընելու ալ իշխանութիւն տուաւ Անոր, քանզի Անիկա Որդի մարդոյ է Յովհ. Ե. 22, 27): Արդ, Յիսուսի խօսած բոլոր խօսքերը զորոնք կը կարգանք Աւետարաններուն մէջ, իրենց ճշմարտութեան եւ արժանահաւատութեան կնիքը ընդունեցին Աստուծոյ՝ յարութեան մեծ իրողութիւնով:

բ. Յարութեան կարեւորութիւնը հաւատացեալներուն համար.— Զարմանալի չէ ուրեմն եւ դիւրամբոնելի յարութեան կարեւորութիւնը նաեւ մեզի համար, քանի որ Քրիստոսի յարութենէն բղխած ամբողջ օրհնութեան առաջին ճառագայթները մեզի կը հասնին: Առաքեալները ասոր զիտակից, իրենց քարոզութեան նիւթն ըրած էին Քրիստոսի յարութիւնը եւ զայն կը նկատէին իրաւամբ քրիստոնէական հաւատքին ամենակենսական հիմք: «Եթէ Քրիստոս յարութիւն առած չէ, ուրեմն ձեր հաւատքը պարապ է, ու տակաւին ձեր մեղքերուն մէջ էք, նոյնպէս Քրիստոսով ննջողներն ալ կորսուած են»:

Կը տեսնենք տասներկուքը Պէնտէկոստէի քարոզին մէջ, վկայելով Ս. Հոգւոյն զօրութեամբը թէ, Այդ Յիսուսը Աստուած Տէր ալ ըրաւ Օծեալ ալ, եւ ով որ Անոր հաւատարմ պիտի փրկուէր, վասնզի խոստումը իրենցն էր եւ իրենց որդիներունը:

Ահ, աստուածային խոստումներն էին որ հաստատուած էին Քրիստոսի վրայ. Անիկա Իր անձը ունայնացուցած աշխարհ եկած էր, Հօրը խոստման վստահ թէ Հայրը զԱնիկա գերեզմանին մէջ չպիտի լքէր, ու Հայրը կատարած էր այդ խոստումը: Ժիշդ նոյն խոստումը նաեւ եղած է Քրիստոսով բոլոր մարդկութեան և Աստուած Իր հաւատարիմ ու բարի ըլլալը ցոյց կուտար մարդ-

կութեան սոյն յարութեան առաւօտուն. ահա թէ ո՞րքան կարեւոր է յարութիւնը մեզի համար:

Քրիստոնէական հաւատքին երկու հիմնական վարդապետութիւններէն առաջինը Յիսուս Քրիստոսի փոխանորդական մասն է մեզի համար: Արդ, փոխանորդական մասն միակ դիւցազնական մասն մը պիտի նկատուէր պատմութեան մէջ, եթէ անոր չհետեւէր յարութեան իրողութիւնը: Մեզի համար, «Մեր խաղաղութեան պատիժը Անոր վրայ եղաւ և Անոր վերքերովը մենք բժշկուեցանք» խոստումը որպէս անհաւատալի վարկած մը պիտի ըլլար, բայց հիմա գիտենք թէ Աստուած մեր մեղքերն ու անօրէնութիւնները ներած է մեզի մեր Տէրոջ Յիսուս Քրիստոսի շնորհքով: Մենք եւս Հօր Աստուծոյ ընտրած, ընդունած, յարուցած եւ Իր աջ կողմը նըստեցուցած Որդւոյն հետ ընտրուած, ընդունուած այրուցուած եւ Անոր աջ կողմը նստած ենք (Եփես. Բ. 5, 6): Անիկա մեզի անխախտելի յայտման է, որ մեր մէջ կենսունակութիւն կը գնէ Քրիստոսի հետ եղած կատարեալ միութիւնով պատգաբերելու: Աստուծոյ գաւակներէն անոնք որ պտուղ չունին, պիտի թելադրէի որ իրենց առօրեայ ուսումնասիրութեան նիւթ ընեն Յարուցեալ Քրիստոսը եւ Ս. Հոգւոյն լուսովը քննեն այս ըսքանչելի նիւթը, իւրացնեն զայն ու կեանք, կենսունակութիւն եւ պտղաբերութեան զօրութիւն պիտի ընդունին: Այս կը նշանակէ յաղթութիւն մեղքի վրայ և հնազանդութեան պտուղ առ Տէր:

Կը շեշտուի նաեւ Անոր սքանչելի բարեխօսական պաշտօնին մէջ: Ինչպէս քահանայապետը մեղքի պատարագը մատուցանելէն յետոյ անոր արիւնը կը տանէր քաւութեան սեղանին վրայ քսելու որպէս մնայուն նշան եղած պատարագին եւ քաւութեան, նոյնպէս ըրաւ մեր Փրկիչը: Իր խաչին վրայ ըրած պատարագէն յետոյ յարութեամբ Ինքն անձամբ, որպէս միակ Քահանայետը, մօտեցաւ Աստուծոյ ներկայութեան բուն Իր մշտնջենական արեամբ բարեխօսելու:

Ի՞նչ մեծ երաշխիք մըն է այս մեր ապագայ յարութեան, Աստուծոյ ըրած ամենափոքր ու ամենամեծ խոստումներուն, որոնք մեզի «այս ու ամէն» են Քրիստոսով: Ու եթէ այս աշխարհային կեանքին մէջ հանգիպինք կարգ մը անելներու, վստահութեամբ կրնանք ըսել, «Թէեւ մահուան շուքի ձորին մէջ ալ պարտիմ, չարէն պիտի չի վախնամ, վասնզի Դուն ինծի հետ եմ»:

Հոգի, յարութեան կարեւորութիւնը լայնօրէն թող գրաւէ միտքդ ու ինծի հետ մէկտեղ փառք տուր Յարուցեալին անքննելի շնորհքին համար:

ՍՐԲՈՒԹԻՒՆ

Վասնզի Աստուծոյ կամքը այս է, այսինքն
ձեր սուրբ ըլլալը... առանց որոյ մէ՛կը պիտի
չտեսնէ զԱստուծո: Ա. թիւս. Դ. 3: Եբր. ԺԲ. 14

Երանի՛ տանց որ սրտով մտքո՛ւք են, վասն-
զի անոնք պիտի տեսնեն զԱստուծո: Մատ. Ե. 8

I

Տրամահառաջ եղբայր մ'էր ան, գլուխը կախ,
Աչքերէն միշտ կարծես թախիծ կը հոսէր...
Ոնկիւն մ'ունէր, պատէն խաբայտ մը առկա
Ուր՝ յաճախ լը՛ւռ, ճակատն հողին կ'աղօթէր:

Օր մը, ի՛նչ օր, մենշաղի լուռ պահուն՝
Տերեւածափ ծառի մը տակ զան գտայ:
Եղբայրսէն ձեռքս գլրի ուտերուն,
Եւ հարցուցի, «Ըսէ, ի՛նչ կայ սրտիդ վրայ»:

Լուռ քնքշութեամբ աչքերուս մէջ նայեցաւ...
Սիրտը փլաւ եւ սկսաւ արտասուել...
«Հոս գեռ մեղք կայ...», հեծեց մեղմիւ, «Մեղք եւ ցաւ»:
Գլուխն կախեց, կ'ելեւէջէր սիրուն ուժգին,
Ձի սրբութեան ներքին մարմաջն այրողիկ՝
Կը խռովէր արատաւոր իր հոգին:

«Մի՛ լար», ըսի, «Արցունքն երբեք ոյժ չունի,
Փրկչին նայէ, Ան է որ քեզ կը սրբէ:
Տե՛ս իր կողը քեզի համար կ'արիւնի՛...
Ո՛հ ալբ արիւնն է որ սրտերն կը մարբէ»:

II

Օրեր անցան, եւ զինք երբեք չտեսայ:
Փնտռեցի զան, ըսին, «Վաղուց մեկնեցաւ,
Եւ ո՛վ գիտէ, գուցէ երբեք չդառնայ»:

Ու յիշեցի որ այդ անկեան մէջ ծռնկղիւր,
Մեկնող հոգին, ոչ թէ ներսում կը հայցէր,
Այլ սրբութիւն... Յիսուսի կեանքն անբասիր:

Օ՛հ, այդ խորհուրդն որպէս բողոք կենդանի,
Խթանեց խիղճս եւ էութիւնս անմաքուր:
Ու հուսկ տեսայ բիծեր շատ մռն եւ գաղտնի
Սրտիս ծածուկ անկիւններուն մէջ անլուր:

Ու ես լացի, լացի ինչպէս որ կուլար,
Մաքուր սրտի կարօտ քաշող խիղճ հոգին:
Ու հասկցայ թէ պատանկն տրամահար
Ինչո՞ւ միշտ թաց աչքեր ունէր ցաւագին:

Այդ վայրկեանին տրամութեան ամպ մը մուսլ,
Ծածկեց հոգիս, ու կարծեցի ակամայ
Թէ կը մարի հրճուանքին աստղն անայլայլ
Գիշերին մէջ որ կ'անհուննար սրտիս վրայ:

III

Եւ օր մ'ահա անձամբ հիւր մը ժպտուն,
Դուռը բաղինց ու ներս մտաւ անվարան:
Ձեռքս խնդրեց, աչքը աչքիս սեւեռուն
Ըսաւ, «Քեզի պատգամ մ'ունիմ անմահ»:

Ապա յարեց, «Կը ճանջնա՞ս զիս հին ընկեր,
Եւ ծառին տակ կուրծքիդ վրայ լացողն եմ,
Բայց ա՛լ չեմ լար, զի անտուրբ սիրտս կարելէր
Յիսուս մաքրեց իր արիւնովը վրսեմ»:

«Ու դուն գիտես որ սրբութեան ի խնդիր
Որքան արցունք, ծով եւ աղօթք մատուցի,
Ի զո՞ւր... զի ես չունեցայ սիրտ մ'ամբասիր»:

Ու քաղցրօրէն շարունակեց, «Ալ չեմ լար
Ձի իմ բոլոր անկարելիս ԱՆ ԿՐՆԱՅ...
Հաւատացի ու տեսայ փառքն իր անճառ...»:

*
* *

«Գիտցի՛ր եղբայր, թէ մեր կոչումն վերջնական՝
Ձէ՛ փրկութիւն, անկում... զոչում... ու ներում,
Այլ սրբութիւն— Ահա խտեղն գերբնական,
Առանց որոյ պիտի մընանք միշտ տրտում...»:

IV

«Արդ, փառք Յնոր, զի մանկական հաւատքով
Միայն կրնանք սրբութիւն ամբողջ էութեամբ,
Եւ պահուիլ միշտ սուրբ՝ իր Հոգւոյն կրակով»:

«Այս էր պատգամն», կրկնեց անուշ ժպտով,
«Նոյն է նաեւ վկայութիւն Տշմարիտ,
Թէ Տէրը զիս սրբացուց իր արիւնով»:

«Ձի հաւատքով իր մահուան մէջ եւ մեռայ,
Ու յարութեան զօրութիւնովն փառաւոր
Նա իմ մէջս, եւ ալ իր մէջ միշտ անմահ՝
Պիտի ապրիմ այս սուրբ կեանքը օրէ օր»:

«Կը հաւատամ թէ, Տէր Յիսուս խաչին վրայ
Ինծի համար կատարած է — ամէն բան—
Այ մեղք, հին մարդ, աշխարհ եւ կամ Սատանայ
Իշխանութիւն չունին վրաս լաւիտեան»:

*
* *

Դուռը փակեց եւ մեկնեցաւ պատանին,
Բայց տրամահիւծ դէմքն իր որքա՞ն փոխուած էր:
Ցամուկ աջաց տեղ գոյգ մ'աստղեր երկնային
Ուր՝ լոյս, ժպիտ եւ սրբութիւն կը վառէր...

ՍԱՄՈՒԷԼ Պ.

Լա Սիոն

ՀՈԳ. ԿԵԱՆՔ

ՔԱՂԱՔԻՆ ՄԷՋ ՍՊԱՍԵԼ

Այսպէս քաղաքին մէջ սպասեցին: Արդեօք երբեք ձեր երեւակայութեան առջեւ բերած էք սպասման այս տասը օրերը: Վարդապետը իրենցմէ առնուած էր: Տեսած էին Անոր երկինք համբառնալը: Հրեշտակներուն խօսքին արձագանգը տակաւին կը հնչէր անոնց ազանջին: Կորսնցուցած էին իրենց Տէրը, սակայն արտասուքով մթնազնած չէին անոնց աչքերը, ոչ ալ կասկածով ու վախով ամպոտած անոնց միտքերը: Մեծ ուրախութեամբ երուսաղէմ դարձան եւ ամէն տակն տաճարին մէջ էին, ու կը զովաբանէին ու կ'օրհնէին զԱստուած:

Մեզի կ'ըսուի թէ, «Աշակերտները ամէնը միաբանութեամբ միշտ աղօթք ու աղաչանք կ'ընէին կիներուն հետ»: Տէրը անոնց զօրութիւն խոստացած էր. ուրեմն անտարակոյս այս էր նաեւ անոնց աղօթքին նիւթը, մինչ անոնց աղաչանքը կը դառնար այն հազարաւորներուն շուրջ որոնք տօնի առթիւ երուսաղէմ եկած էին երկրպագելու:

Այս աղօթածոցովը հիանալի աղօթքի ժողով մը ըլլալու էր: Սպասման այս օրերէն առաջ թէպէտեւ երկինքը Աստուծոյ փառքովը լեցուած էր, սակայն փառաց Տէրոջը հոն ընդունուելէն վերջը երկինք նոր տեղ մը դարձած էր աշակերտներուն համար քանզի իրենց օրհնեալ Փրկիչը հոն բարեխօսութիւն կ'ընէր իրենց համար: Անսահմանութիւնը կեդրոն մը ստացած էր: Երկինքի ամբողջ փառքը կը կեդրոնանար Տէր Յիսուս Քրիստոսի անձին վրայ: Աշակերտները անշուշտ Անոր էր որ կը բարձրացնէին իրենց աղօթքները: Անոր՝ որ բարձրեալ Աստուծոյ աջ կողմը բազմած էր: «Անիկա մեծ պիտի ըլլայ», ըսաւ Դաբբիէլ Տէրոջը ծննդեան առթիւ. եւ Անիկա իր այդ մեծութեամբ տակաւին մեզի համար կը բարեխօսէ:

«Բայց զիտեմ որ ինչ որ խնդրես Աստուծմէ, պիտի տայ քեզի», ըսած էր Մարթա օր մը Յիսուսի: Եւ Յիսուս անոնց խոստում ըրած էր ըսելով, «Ես ալ Հօրը պիտի աղաչեմ եւ ուրիշ մխիթարիչ մը պիտի տայ ձեզի, որպէսզի յաւիտեան ձեզի հետ բնակի»: Արդեօք որքան մեծ վստահութեամբ այս 120 աշակերտները կ'աղօթէին: Քրիստոս իրենց համար կը բարեխօսէր, իրենք աղօթք ու աղաչանք կը մատուցանէին, մինչ Հայրն Աստուած արդէն խոստացած էր ի-

րենց զրկել իր օրհնութիւնը, քանզի մեր Տէրը Սբ. Հոգիին պարգեւը կը կոչէ «Հօրը խոստումը»:

Երեւակայեցէք այն վերնատունը: Մինչ աշակերտները կ'աղօթէին, անոնց ազանջներուն կը հնչէր Փրկչին խօսքը, «Նստեցէք մինչեւ վերէն զօրութիւն առնէք վրանիդ: Հոգւոյն Սրբոյ ձեր վրայ եկած ատենը զօրութիւն պիտի առնէք: Իրաւ Յովհաննէս ջուրով մկրտեց, բայց դուք առկէ շատ օրեր չանցած Սուրբ Հոգիով պիտի մըկըրաուիք»:

Անտարակոյս անոնցմէ ոմանք կը յիշէին Յովհաննէս Մկրտիչի մարգարէութիւնը, «Անիկա ձեզ պիտի մկրտէ Հոգւով Սրբով եւ կրակով»: Ինչ կը նշանակէր այս ամէնը: Մովսէսի պատմութիւնը եւ կրակով այրող, սակայն չսպառող մորենիին երեւոյթը, Սրբութիւն Սրբութեանց մէջ զանազան տապանակին վրայ երեւցած Տէրոջը փառքը, Եզեկիէլ եւ Եսայի մարգարէներուն մարգարէութիւնները եւ տաճարին սեղանին վերայէն առնուած կայծը որ մարգարէին շրթունքներուն դպցուեցաւ, նոր նշանակութիւն եւ կարեւորութիւն ստացան անոնց համար: Սակայն անոնք իրենց ժամանակին մեծ մասը աղօթքով անցուցին: Ուրախ աղօթածոցով մըն էր: Բոլորն ալ մասնաւոր յուսով մը լեցուած էին:

Այսպէս աղօթեցին ու աղօթեցին: Այսպէս սպասեցին ու սպասեցին: Զարմանալի է որ Փրկչին գալստեան կարօտովը համակուած չէին թուեր: Կը հաւատային Անոր խօսքին, «Աղէկ է ձեզի եթէ Ես երթամ, քանզի եթէ Ես չերթամ, Մխիթարիչը ձեզի չգար»: Յիսուս ըսած էր թէ Սուրբ Հոգիին գալը իրենց աւելի օգտակար պիտի ըլլար: Ուստի ինչ եռանդով կ'աղօթէին վերէն գալիք զօրութեան համար որ թէպէտեւ իրենց համար գաղտնիք մըն էր, սակայն միեւնոյն ժամանակ անհրաժեշտ պէտք մը:

Համբերութեամբ սպասեցին: Թովմասի միտքէն անգամ չանցաւ բացակայիլ աշակերտներուն ժողովէն. ոչ ալ Պետրոս փորձուեցաւ աղաղակել, «Ես ձուկ որսալու կ'երթամ»:

«Շատ օրեր չանցած»: Ինչ օր կ'անցնի եւ զօրութիւնը չիջներ վերէն: Յանցանքը որո՞ւնն էր արդեօք: Աշակերտները կը փափաքէին զօրութիւն ստանալ եւ Զերմեռանդութեամբ ու հաւատքով կ'աղօթէին: Նաեւ ուրախութեամբ լեցուն սիրտերով կը փառաբանէին զԱստուած, սակայն օրհնութիւնը չէր գար: Արդ եթէ մենք այդ խմբակին մէջ գտնուած ըլլայինք, արդեօք յանցանքը մէկի մը վրայ պիտի չձգէինք: Թերեւս Սատանան զանոնք կը փորձէր արգելքը ուրիշ-

ներու մէջ դանել: Անոնց մէջ շատեր կային, զորոնք ներկայ եկեղեցին արժանի պիտի չսեպէր Սուրբ Հոգին ստանալու: Որչա՞փ դիւրին պիտի ըլլար ուրիշը քննադատել: Բոլորափքնին նույնով կրնային խորհիլ եւ նոյնիսկ ըսել, «Միթէ կարելի՞ է որ մեր վրայ զօրութիւն գայ քանի որ թո՞վմաս իր տարակուսող բնասութեամբը մեր մէջ կը գտնուի: 2^է որ Տէրը յարութեան մասին մեր բոլորին տուած վկայութիւնը չընդունեց: Անտարակոյս անոր սրտին մէջ գաղտնի անհաւատութիւն կը գտնուի տակաւին: Հաւատքի պակասը Աստուծոյ զօրութեամբ գործելուն արդեւք է: Հապա Սիմոն Պետրո՞ւր: Արդեօք անիկա ալ յանցաւոր չէ: Դեռ ե՞րբ էր որ երդումով ու անիծելով իր Տէրը ուրացաւ: Կարելի՞ է որ անիկա իր այդ միեւնոյն շրթունքներով Տէրոջը համար վկայելու զօրութիւն ստանայ: Անշուշտ մէկ երկու տարի փորձուելու էր մինչեւ որ վրատահելի դառնար:

Միտքերնիդ բերէք նաեւ Զեբեդէոսի որդիները: Անոնք չէ՞ին որ Քրիստոսի թագաւորութեանը մէջ երկու զլխաւոր տեղերը գրաւելու ձգտեցան եւ նոյնիսկ այնպէս խնդրեցին: Անկարելի է որ Աստուած կարենայ իր զօրութիւնը տալ այսպէս իրենց անձը փնտռողներուն: Եթէ անոնք զօրութիւն ստանային, գայն իրենց անձերը փառաւորելու պիտի գործածէին: Կը յիշենք նաեւ թէ ինչպէս անոնք իրենց հակառակորդներուն վրայ երկիրքէն կրակ իջեցնել փափաքեցան: Կարելի՞ է այդպէս դիւրաբորոք մարդոց վրայ զօրութիւն զրկել: Կարելի՞ է մեղադրել կիները եթէ անոնք խորհէին թէ աշակերտները արգելք էին զօրութեան գալուն: Միթէ ամէն ալ Անոր ամենէն դժուար պարագաներուն զԱյն թողած եւ փախած չէին: Մարդիկն ալ փոխադարձաբար կրնային յանցանքը կիներուն վերագրել: Մարիամ Մագդաղենացիին մէջէն չէ՞ր որ Տէրը եօթը դեւեր հանած էր: Ինչպէ՞ս կրնար Սուրբ Հոգին իր լեցունութեամբը բնակիլ սրտի մը մէջ որ տակաւին շատ չանցած չար ոգիներու բնակարան եղած էր: Որչա՞փ դիւրին էր ուրիշները մեղադրել:

Նոյնիսկ թերեւս կիներուն առաջարկէին հեռանալ իրենց ժողովներէն, առարկելով թէ վկայիլը մարդոց գործն էր եւ ոչ թէ կիներուն: Կը ճանչնամ Աստուծոյ գաւազներ որ ետ քաշուիլ սպառնացան, եթէ թուլատրուէր սուրբ կեանք մը վարող կիներուն քարոզել եկեղեցիի մը մէջ՝ նոյնիսկ միայն կիներու: Աստուած մեզի օգնութեան հասնի:

Սակայն Յիսուս կին մը ըրաւ իր յարութեան ամենէն առաջին պատգամաւորը: Անոնք որ կիներու ծառայութիւնը կ'արգիլեն, պէտք է շփման գան աստուածավայն եւ նուիրուած Պրիսկիլայի մը, որ «Աւելի ճշդիւ Աստուծոյ ճամբան իրենց հասկցնէ»: Վերնատան մէջ գտնուող սուրբ կիները օգնութիւն մըն էին եւ ոչ թէ արգելք: Եւ անոնք ալ քիչ վերջը Սուրբ Հոգիով լեցունեցան: Այն մեծ եւ անբաղդատելի զօրութեան օրհնութիւնը 120 աշակերտներուն իւրաքանչիւրին վրայ իջաւ վերէն առանց նկատի առնելու անոնց անցեալ թերութիւններն ու ներկայ անարժանութիւնը: Մարիամ Մագդաղենացին նոյնքան օրհնուեցաւ որքան մեր Տէրոջը մայրը Մարիամ:

Ներեցէք որ այս կէտը քիչ մը աւելի շեշտեմ: Մենք խիստ հակամէտ ենք ուրիշներու վրայ գանգատելու եւ մեր զօրութեան պակասին յանցանքը ուրիշներու սխալներուն եւ թերութիւններուն վերագրելու: Մեր մեղքերուն մասին սխալ գաղափար կազմելէ զգուշանանք: Մեր օրհնեալ Տէրը երբեք չքմեղանքով չմօտեցաւ մեղքին: Մեղքը անէծք մըն է եւ միշտ անէծք մը կը մնայ: Մեղքը ի՞նչ երեւութով ալ ներկայանալու ըլլայ, օրհնութիւն յառաջ չբերել: Իրաւ մեր Տէրը օր մը մատնանշեց թէ, որու որ շատ ներուի աւելի կը սիրէ, սակայն սխալ է երեւակայել թէ թողութեան արժանացող մեծագոյն մեղաւորներ աւելի առաւելութիւններ կը վայելեն քան ուրիշ մեղաւորներ որ ներում ստացած են: Մարդիկ հակամէտ են խորհելու թէ Աստուծոյ համար աւելի դիւրին է անարգ, մեղաւոր, վայրագ բարբարոս մը սուրբ եւ հոգեւոր մարդու մը վերածելու, քան բարձր բարոյակաւնի տէր անհատ մը: Այդ գաղափարը սխալ է: Որեւէ պարագայի տակ մեղքը առաւելութիւն մը չէ: Սակայն եթէ ճշմարտապէս եւ սրտանց ապաշխարենք, Աստուած մեզի որեւէ օրհնութիւն չզլանար՝ մեղանշած ըլլալնու համար: Յովհաննէս Առաքեալ որ անգամ մը խնդրած էր որ Սամարացիներուն վրայ կրակ իջնէր, արտօնուեցաւ աղօթելու որ Սուրբ Հոգին անոնց վրայ իջնէր (Գործ. Ը. 14, 15): Ծշմարիտ է թէ մեծ մեղաւորներ երբեմն մեծ սուրբերու կը վերածուին Սուրբ Օգոստինոսի նման որ ժամանակին անառակ մէկն էր: Սակայն ընդհանրապէս անցեալի արատները մեր սրբութեան փաստ կ'ըլլան, թէպէտեւ այդպէս ըլլալու չէր:

Արդ, մեր փափաքն է վերէն զօրութիւն ըստանալ: Բոլորս ալ սրտանց կը փափաքինք եւ կ'աղօթենք ու կը զարմանանք որ վերէն զօրու-

թիւն չիջներ մեր վրայ: Արդեօք արդեւքը փոխանակ մեր մէջը փնտռելու, մեզմէ զո՞ւրս կը փնտռենք: Որչափ յաճախ երէցը աշխարհիկ ժողովուրդը յանցաւոր կը հանէ, եւ ժողովուրդը ոչ-հոգեւոր հովիւը: Անհատներ իրենց զօրութեան պակասը կը սիրեն վերագրել եկեղեցւոյ միւս անդամներուն պաղութեան եւ մեռած վիճակին: Եթէ անկեղծ ըլլային եւ իրապէս Սուրբ Հոգիին լեցունութիւնը փնտռէին, որչափ տարբեր եւ որչափ դիւրին պիտի ըլլար:

Տեսանք թէ միջավայրը չկրնար արդեւք ըլլալ Աստուծոյ օրհնութեան: Պէնտէկոստէին Սբ. Հոգին առանձին եւ խաղաղիկ վայրի մը մէջ չիջաւ աշակերտներուն վրայ, այլ թշնամի եւ խռնուած քաղաքի մը մէջ, կրօնական աօնի մը առթիւ: Այս գլխուն մէջ կը ջանանք շեշտել թէ ամէն մարդ կրնայ վերէն զօրութեան արժանանալ հակառակ իր բարեկամներուն հոգեւոր պարգեւներու շուրջ անտարբեր գտնուելուն, վաճառի Սուրբ Հոգիին արդէն տրուած է եւ ամէն հաւատացեալի մէջ կը բնակի:

Քեզմէ զատ ոչ ոք կարող է զքեզ զրկել այս օրհնութեան լեցունութենէն: Ոչ մէկը ուրիշներու սխալներուն եւ թերութիւններուն պատճառով կը զրկուի որեւէ հոգեւոր պարգեւէ: Երէցին անարժանութիւնը անպատճառ զքեզ զօրութենէ զրկելու չէ: Եւ եկեղեցիին անարժանութիւնը չկրնար արգելք ըլլալ երէցին Աստուծոյ պարգեւը ստանալուն: Ֆէնթըն Հօլ, Ամադոնիայի այն հիմնադիրներէն նուիրուած միսիոնարը, իր օրագրին մէջ գրած էր, «Թերեւս այս նաւուն վրայ մէկ անհատ մը միայն կայ որ կրնայ Աստուծոյ նպատակը ի դերեւ հանել, եւ այդ անհատը ես եմ»:

Նաեւ միայն մէկ անհատ կարող է քու զօրաւոր քրիստոնեայ մը ըլլալուդ արգելք հանդիսանալ, այդ անհատը դուն ես: Միջավայրը արգելք չկրնար ըլլալ, քաղաքին մէջ կրնաս նոյնքան զօրութեամբ լեցուիլ որքան լեռան գագաթը: Ոչ ալ երկմիտ ու պաղ քրիստոնեայ ընկերներդ քեզի արգելք հանդիսանալու են: Դո՛ւն, միայն դո՛ւն կարող ես Աստուծոյ օրհնութիւնը քեզմէ հեռու պահել: Ահարոնի գաւազանը կարգ մը չոր գաւազաններու հետ կապուած վիճակին մէջ ծլեցաւ, ծաղիկ բացաւ ու նուշեր հասցուց:

Եթէ վերէն զօրութիւն ստացած չենք, պատճառը այն չէ որ գայն ընդունելու անյարմար եղած ենք, այլ որովհետեւ չենք թուլատրեր Յիսուսի որ մեզ իր գործածութեան համար պատրաստէ:

Ո՛չ մեր անցեալին ունեցած տարակոյտը, ո՛չ ուրացումը, ո՛չ հայհոյութիւնը կամ անձնասիրութիւնը կրնան մեզ վերէն զօրութիւն ստանալէ արգելք ըլլալ:

Մեզմէ ոչ մէկը այնքան հեռու, այնքան ցած կամ այնքան մեղանշական է որ չկրնայ յաղթական քրիստոնեայ մը ըլլալ: Միակ պայմանը Տէրոջը յանձնուիլն է, որ ինք իր յարմար սեպածին պէս վարուի մեզի հետ:

Եթէ ամբողջ սրտով այս օրհնութիւնը ճշմարտապէս փնտռենք, զայն անպատճառ պիտի գտնենք: Անիկա կը գտնուի այսօր, անմիջապէս եւ հիմա:

ԱՐԻԻՆ

Եւ արիւնը ձեր եղած տուններուն վրայ նշանի համար ըլլաւ: Եւեց ԺԲ. 13

Սուրբ Գրքին մէկ ծայրէն միւսը սքանչելի նպատակ մը եւ զօրութիւն ցուցնող լաւ կարգաւորուած ծրագիր մը կայ արիւնի վերաբերմամբ: Աս ծրագիրը Աստուածային տեսութեամբ քննելով վստահաբար հոգիդ պիտի հարստացնէ:

Արիւնը ամենէն կենսական կարեւորութիւնը ունի: Առանց անոր մեղքերու թողութիւն—փրկութիւն չէ կարելի: Յանցապարտ մեղաւորին համար Աստուծոյ Որդւոյն Յիսուս Քրիստոսի արիւնէն զատ ուրիշ միջոց չկայ:

Այս ճշմարտութիւնը այնքան ծանրակշիռ եւ արեւոր, այնքան կեդրոնական եւ կենսական է որ Աստուած աշխարհի պատմութենէն 4000 տարիներ յատկացուց օրինակներու եւ շուքերու յաջորդական երկար շարքով մը Քրիստոսի խաչը հասկնալու համար մարդոց միտքերը աստիճանաբար պատրաստելու: Աստուած իր առջեւ մեղաւորներով լեցուն աշխարհ մը ունէր. եւ Նա այնպէս սիրեց գտնոյնք որ իր Որդին զրկեց «Ամենուն համար մահ ճաշակելու» Եբր. Բ. 9: Արիւնոտ զոհերը միայն Իսրայէլի չէին սահմանափակուած: Աքէլ զոհ մատուց (Ծննդ. Դ. 4), նոյնպէս Նոյ (Ծննդ. Ը. 20) եւ Յոբ (Յոբ. Ա. 15): Չար Բաաղամբ ու Մովսրի թագաւորն ալ արիւնոտ զոհեր մատուցին (Թուոց ԻԳ): Արիւնոտ զոհեր կը պատմուին հին Լատիներէն եւ Յունարէն դասագրքերու մէջ Գործ. ԺԴ. 13-18ի նկարագրութեան նման: Բայց Իսրայէլի մէջ է որ արիւնի մեծ ծրագիրը կը յայտնուի իր ամբողջ վեհաշուք զօրութեամբը, եւ զայն գտնելու համար պէտք է չին կտակարանը սերտենք:

Ողջակէզի գաղափարը շատ սերտօրէն կապուած է Իսրայէլի պատմութեան իւրաքանչիւր քայլին եւ դէպքին հետ 1500 տարիներու երկար շրջանի մը մէջ մինչեւ խաչը: Առաջին ազգային պատարագը եղող Եզրիպտոսի Զատիկէն սկսեալ մինչեւ Քրիստոս մեր Զատիկը մօտաւորապէս 15 դարեր կան: Խաչը իր խորհրդաւոր շուքը ձգած է Իսրայէլի պատմութեան 15 դարերու երկայնքին:

Աստուած հանդարտօրէն 1500-4000 տարիներ գործեց մարդոց սրտերուն վրայ տպաւորելու ողջակէզի, փոխանորդական քաւութեան, մահուան եւ արիւն թափելու գաղափարները, որոնք փերկազորութեան բուն իսկ հիմն են: Միայն ասիկա կարելի կ'ընէ որ մենք իրեն մօտենանք:

Հիմա այն շուքերուն նայինք ուրիշ կերպով մը: Եզրիպտոսի մէջ գերի Իսրայէլը աղքատ էր, մէկ տունի համար մէկ գառնուկը կրնար շատ գալ, եւ եթէ չկրնային հայթայթել, այն ատեն երկու կամ երեք տուներ կրնային միանալ: Բայց Աստուծոյ օրհնութիւնը անոնց վրայ էր, եւ իր շնորհքով քանի անոնց ստացուածքը աւելցաւ, անոնց երախտագիտութիւնն ալ աւելի կատարեալ արտայայտութիւն ստացաւ: Զոհերը բազմապատկուեցան մինչեւ որ անոնք իրենց գազաթնակէտին հասան տաճարին նաւակատիքի պահուն: «Սողոմոն թագաւորը 22,000 արջառ եւ 120,000 ոչխար զոհ ւրաւ» Բ. Մնաց. Է. 5: Դիւրին չէ այս թիւերը ըմբռնել. շատ քիչ մարդիկ կեանքերնուն մէջ արջառներու այդպիսի հսկայ երամակ մը, կամ ոչխարներու մեծ հօտ մը տեսած են, որոնց արժէքը, քառորդ միլիոն տոլարէն աւելի պիտի արժէր: Արիւնի գետերը որ վազեցին, եւ անասուններուն չարչարանքը ու մահը: Դժուար չէ երեւակայել քահանաներու պղծտիկ բանակ մը արինջուայ ձեռքերով, արիւն-թաթախ դանակներով, մորթուած միսերու հսկայ դէզեր, եւ բոլոր այդ հսկայակոյտ ողջակէզէն բարձրացած ծուխը որ երկինք կը մթնցնէր: Աստուած դժգոհ չէր, որովհետեւ նոյն այդ զըլխուն մէջ կը կարդանք թէ նա իր հաճութիւնը ցուցուց երկինքէն կրակ զրկելով: Որքան վըսեմ ու պատկառազօր ըլլալու էր այդ տեսարանը: Բայց բոլոր այդ արիւնը չէր կրնար լուալ մեղքի մէկ բիծ կամ արատ: «Վասնզի նոխազներուն ու ցուլերուն արիւնը չկրնար մեղքերը վերցնել» Եբր. Ժ. 4: Ի՞նչ բանի կը ծառայէին բոլոր ատոնք: Կասկած չկայ թէ Աստուծոյ զըլխաւոր նպատակը խաչին շուքերը ցուցնել էր: Արդարեւ այս շուքերը մութ, խորունկ եւ խորհրդաւոր էին:

Անհաւատը զայս «Սպանդանոցի կրօնք» կը կոչէ եւ ողջակէզի արժողութեան, վատնումին եւ կորուստին առարկութիւն կ'ընէ՝ ինչպէս ըրաւ Յուդա Յովհ. ԺԲ. զիսուն մէջ: Բայց իւրաքանչիւր ողջակէզ արիւնոտ մատ մըն էր դարերու մէջէն դէպի Քրիստոս ուղղուած, եւ Աստուած ասոր կը հաճէր, թէ եւ անհաւատը չի հաճիր: Իսկապէս որքան ահարկու ըլլալու է դարերու ընթացքին մատուցուած այդ զոհերուն չարչարանքի, արեան եւ մահուան զուժարը: Մենք այս մասին շատ տկար ըմբռնում մը ունինք: Բայց յետոյ երբ հասաւ խորհրդաւոր ժամը որուն մէջ Փոխանորդը շուքերուն տեղը լեցուց. երբ միակ իրական զոհը մատուցուեցաւ, ի՞նչ կը նշանակէին Աստուծոյ համար այն երեք ժամերը երբ,

Պատուով քարերու եւ մթագնած երկին.

քին տակ

Փրկիչը գլուխը ծռելով հոգին աւանդեց:

Ըսէ, ընթերցող, դուն կրնաս ասոր խորունկութիւնը չափել: Զարմանալի չէ որ աշխարհ իբր ողջակէզի սեղան, շարժեցաւ երբ իր վրայ իրեն Ստեղծիչը զոհուեցաւ իբր կրակէն սեղած ողջակէզ մը Աստուծոյ ահարկու բարկութեան ներքեւ: Ո՛րքան անհունօրէն ամէն բանէ բարձր է այդ ողջակէզը Աստուծոյ մտքին մէջ: Ասոր ի տես մենք կ'զմայլինք, եւ կ'երկրպագենք ու կը պաշտենք: Հաւատքով ասոր վրայ հանգչելով մենք յաւիտենական խաղաղութիւն ունինք, որովհետեւ Անով Աստուած փառաւորուեցաւ եւ մեր մեղքերը ջնջուեցան: Հին օրերուն մէջ՝ Աբէլի եւ Յոսի նման ամէն ուղիղ սրտով զոհ մատուցանող Քրիստոսի շատ աւելի լաւ արիւնն էր որ կ'օգտուէր, ինչու որ այդ հզօր ծառը (խաչը) իր շուքին նման իր գորութիւնն ալ կը տարածէր իրմէն առաջուան դարերուն վրայ. եւ ամէն դարու հաւատացեալ՝ Աստուծոյ վրայ եղած հաւատքով զայն (խաչը) կ'ընդունէր առանց Ասոր «Ինչպէ՞ս»ը, «Ե՞րբ»ը, «Ինչո՞ւ»ն հասկնալու անհրաժեշտութեան:

Արեան այս մեծ ծրագրին ուրիշ մէկ կողմն ալ կայ: Աստուած աշխարհի վրայ մօտ 3,000 տարուան խաչին տեսանելի արարողութեամբ յիշատակութիւնը հաստատեց: Ահաւասիկ թէ ինչպէս. — Եզեկ. ԽԴ. Ի մէջ կը կարդանք թէ Աստուծոյ փառքը պիտի վերադառնայ Իսրայէլի վերաշինուած տաճարին մէջ. եւ հոն կրկին արիւնոտ զոհերու գրութիւն մը կը հաստատուի ամբողջ հազարամեայի ընթացքին: Ի՞նչ է այս

զոհերուն իմաստը: Անոնք անկասկած իրենց տեղը ունին Աստուծոյ Իր ժողովուրդին մեղքերուն հանդէպ վերաբերումին մէջ: Բայց անոնք նաեւ խաչին մէկ հանդիսաւոր յիշատակութիւնն են: Ամբողջ Խորայէլ լըջօրէն կանչուած է այդ հազար տարիներու ընթացքին յաճախակի ժամանակամիջոցներու՝ եւ զէպի խաչը նայիլ: Իսկ հիմա մօտ 2,000 տարի կ'ընէ որ քրիստոնեաներս այդ արեան արարողական եւ տեսանելի մէկ յիշատակութիւնը կը պահենք: Գիտի՞ր զաւաթ մը ձեռքէ ձեռք կը փոխանցենք Քրիստոսի արեան պատկանելի հաղորդութիւնը ունենալու համար, ճիշդ է մեր կողմէն շատ տկարութեամբ, շփոթութեամբ եւ դողով, բայց այդ պատկառազու արարողութեան մէջ մենք կրնանք Աստուծոյ ձեռքը նշմարել: Անոր Որդւոյն արիւնը մօտ 2000 տարիներէ ի վեր կը յիշատակուի աշխարհի վրայ: 4,000 տարուան արիւնոտ կանխածրագիր մը, յետոյ մօտ 5,000 տարիներու յիշատակութիւնը այդ արեան, և յետոյ... յաւիտեանականութիւնը երբ միլիոնաւոր փրկեալներու երկրպագութեան ու փառաբանութեան հիմը պիտի ըլլայ արիւնը յաւիտեան եւ յաւիտեան (Յայտ. Ե.):

Որքա՞ն կեդրոնական եւ կենսական է արեան վրայ եղած ճշմարտութիւնը: Առանց անոր Սուրբ Գիրքը ի՞նչ պիտի ըլլար: Ընթերցող տես արեան արժէքը Աստուծոյ եւ մարդուն համար: «Արիւն չթափուած թողութիւն չըլլար»: «Անոր Որդւոյն Յիսուս Քրիստոսի արիւնը մեզ ամէն մեղքէ կը սրբէ»:

Աստուած մեզի ցուցուցած է թէ Ինք ի՞նչ կը խորհի արեան վրայով:

Դո՛ւն ինչ կը խորհիս:

ՇՆՈՐՀՔ, ՇՆՈՐՀՔ(1)

Սիրելի Աղօլֆ,

Իմ սիրեցեալ պատիկ Մարիս այլեւս չկայ: Այնչափ մխիթարութեանց, ուրախութեանց եւ

(1) Ասիկա մէկ մասն է նամակի մը, գրուած՝ 1827 ին «Աղօլֆ Մօնօ» հոգակաւոր Ֆրանսացի քարոզիչին իր քրոջ կողմէ: Այս միջոցին Մօնօ հոգեկան մեծ տագնապէ մը կ'անցնէր (դեռ ապաշխարած չէր): Իր քոյրը Մատամ Պապի իրեն երրորդ զաւակը կորսնցուց: Այս նամակով նա իր այս զգրազուլթիւնը իբր նոր առիթ մը կը գործածէ իր եղբայրը հաւատքի առաջնորդելու:

յոյսերու աղբիւր եղող զաւակս, գոնէ մեզի համար այս աշխարհի մէջ չկայ: Երբեմն ինծի այնպէս կուգար թէ մեռած Լուիզս էր որ ինծի ետ տրուած էր. հիմա կը կարծեմ թէ զայն երկրորդ անգամ մը կորսնցուցի: Սիրելի եղբայրս, ի՞նչ սրտապատառ են իմ անցուցած տառապանքներս: Ի՞նչ սարսափելի է պարապը որ կը թողու այնքան զորովանօք սիրուած էակ մը: Անկարելի է պատմել այս անուշիկ հինգշաբթի օրուան մէջ զգացած ամբողջ ցաւս: Աստուան ժամը 10ին մեզմէ ամէն յոյս վերցաւ. անկից ետք նա դեռ չորս ժամէն աւելի ապրեցաւ մահուան դէմ պայքարելով ու այնպիսի ազադակներ արձակելով որոնց յիշատակը միայն սիրտս կը բզբաւէ: Մօտ երկու ժամ ես գառանցանքի նմանող յուսահատ վիճակի մը մէջ գտնուեցայ, անկարող ըլլալով ոչ սենեակէն բաժնուիլ, ոչ ալ պատիկին մօտենալու: Ինծմէ զատ ամէնը շրջապատած կը դիտէին զայն:

Վերջապէս ամէն ողորմութեան Աստուածը օգնութեան հասաւ եւ իմ հոգիս խաղաղեցուց: Ան լոնցուց իմ մայրական կոյր կամքս՝ որ Վիլզէր իր սուրբ եւ բարի կամքին դէմ կենալ: Ան ինծի շնորհք տուաւ ցաւիս մէջ գի՞նք օրհնելու: Այս վայրկեանէն սկսեալ ես վերադառայ կորով, քաջութիւն, համակերպութիւն, հնազանդութիւն: Զաւակիս մօտ վերադարձայ, զայն ողջագուրեցի եւ անոր վերջին վայրկեաններուն զայն խնամեցի: Անոր մեռնելէն առաջ իսկ՝ ծունկի եկած ես աղօթեցի Տէրո՛ւ եւ փառաբանեցի զԱյն որ այս կոկծալի մահուամբ մեզի համար ողորմութեան եւ սիրոյ ծրագիրներ ունէր: Աղօթեցի որ այս ցաւը մեզի համար օրհնաբեր ըլլար: Աղօլֆ, այս հանդիսաւոր վայրկեանին ես աղօթեցի նաեւ քեզի համար: Եւ անկասկած Տէրն էր որ իր անհուն ողորմութեամբ իմ՝ բզբտուած սրտիս կ'ըսէր թէ այս մահը կրնար նաեւ քեզի համար օրհնաբեր ըլլալ, թէ այն տառապանքները որոնցմէ քու խեղճ քոյրդ կ'անցնի, կրնային դառնալ աղբիւրը քրիստոնէական այն խաղաղութեան՝ որ քեզի համար սրտի անձկութեամբ կը խնդրենք: Սիրելի Աղօլֆ, եթէ աղջնակս իր մահուամբը կարենար քեզի քարոզել աւելի համոզիչ քան բոլոր անոնք որ ջանացին ցարդ քեզի օգնել, ա՛հ, կ'զգամ թէ իր մահուան օրը իր ծննդեան օրուէն աւելի օրհնեալ օր մը պիտի ըլլար ինծի: Աստուծմէ շնորհակալ պիտի ըլլայի բոլոր տառապանքիս համար. սրտիս մէջ միայն աղջիկներուս երկնային երջանկութիւնը եւ իմ սիրելի Աղօլֆիս երանելի փոփոխութեան

զգացումը պիտի մնար. ասիկա ինձի ոյժ պիտի տար համակերպելու ամէն բանի՝ որ զեռ ինձի կրնայ սպասել. ոչ մէկ ցաւ կրնայ այսպիսի մեծ բարիքի համար սուղ ըլլալ ինձ:

Կը զարմանաս թերեւս՝ զժբաղդութեանցս վրայ հիմնուած այս յոյսիս համար: Զեմ գիտեր, եղբայրս, բայց բան մը կ'ըսէ ինձ թէ զուն ինքզինքդ մղուած պիտի զգաս սիրելու այս կրօնքը, որ քու անբաղդ քոյրդ մխիթարելու և զօրացնելու կարող է: Պիտի համոզուիս թէ երկինքէն կուգայ այս հաւատքը, կարող հանգարտեցնելու մօր մը անձկութիւնները՝ որուն ամենէն սիրելի յոյսերը երեք անգամներ քանդուեցան: Պիտի պաշտեալ այն զթափարտ Փրկիչը որ զիս յուսահատութենէ եւ տրտունջներէ կը փրկէ, որ իմ գաւազներս իր գիրկը առնելով տարաւ, եւ ինձ կարելի կ'ընէ յուսալ թէ օր մը անոնց հետ եւ իր քով պիտի վայելեմ այն հանգիստը եւ երանութիւնը զոր այլեւս չեմ կրնար գտնել, չեմ ուզեր փնտռել այս աշխարհի մէջ: Ո՛հ, թշուառութեան եւ սուգի այս օրերուն՝ առանց Անոր եւ ի՞նչ պիտի ըլլայի: Եթէ նա կենդանի չէ, եթէ իր խօսքերը յաւիտենապէս ճշմարիտ չեն, ուրիշ՝ ըմպել այսքան ցաւերու դիմանալիք զօրութիւնը: Բայց օրհնեալ ըլլայ Ան, իմ հոգիիս մէջ զրած այս վստահութեան համար: Ո՛հ թէ նա բարեհաճէր այս վստահութիւնը քու հոգեւոյդ մէջ ալ փոխանցել: Աղօլֆ, սիրելի եղբայրս, սիրադ Անոր տուր, սիրէ զԱյն Անոր ինձի ըրած բարիքին համար՝ սպասելով որ զԱյն սիրես նաեւ քեզի ընելիք բարիքին համար, խոնարհութեամբ եւ սրտի անկեղծութեամբ Անոր երթալով: Մի ջանար զԱյն հասկնալ: Երբ սորվիս նախ զԱյն սիրել, այն ատեն զԱյն բաւականաչափ պիտի հասկնաս ալ:

«Օրհնեալ ըլլայ Աստուած ու մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հայրը, զթութեան Հայրը եւ ամէն մխիթարութեան Աստուածը, որ մեզ կը մըխիթարէ մեր ամէն նեղութիւններուն մէջ, որպէսզի մենք կարող ըլլանք մխիթարել զանոնք՝ որ ամէն նեղութիւններու մէջ են, այն մխիթարութիւնովը՝ որով մենք Աստուծոյ կը մխիթարուինք»:

Բ. Կոր. Ա. 3, 4

Հետեւեալը մէկ մասն է նամակի մը՝ զրուած միջին զարու սուրբերէն միոյն կողմէ թագուհիի մը, որ իր պատիկ աղջիկը կորսնցուցեր էր:

Եթէ միայն այս կեանքին համար Քրիստոսի յուսացած ենք, մենք բոլոր մարդոցմէն աւելի խղճալի ենք: Ա. Կոր. ԺԵ. 19

Դուն քու գաւազի չկորսնցուցիր, դուն զայն փերադարձուցիր Անոր որ զանիկա քեզի փոխ տուած էր: Անոր կեանքը մարած չէ, այլ միայն աւելի լաւ կեանքի մը հետ փոխուած: Քու սիրելի գաւազի հողը չէ որ ծածկեց, այլ երկինքը զայն ընդունեց: Եթէ գաւազի քեզմէ բաժնուեցաւ, դէպի իր Տէրոջը երթալու համար էր: Անիկա իր աչքերը քեզի համար գոցեց, որպէսզի զանոնք յաւիտենական կեանքի համար բանայ: Այլեւս ձեր քով ձեր հետը սեղան չնստիր, հապա հրեշտակներուն հետ սեղան կը նստի: Անիկա ձեր ընտանեկան պարտէզէն առնուեցաւ, որպէսզի դրախտի պարտէզին մէջ տնկուի: Անիկա երկրի թագաւորութենէն երկինքի թագաւորութեան անցաւ: Անիկա թողուց իր հագուստները, թերեւս շատ մը գեղեցիկ հագուստներ զորոնք դուն մայրական սիրող ձեռքերով շինած էիր, բայց անիկա գնաց հագուել ուրիշ ձիւրանեզոյն հագուստ մը որ մետաքսէ չէ շինուած, հապա չմաշող փառքի մը ճառագայթներէն: Դուն կը տանջուիս, որովհետեւ այլեւս իր դէմքը չես տեսներ, բայց ճշմարիտ գեղեցկութիւնը կը գտնուի իր հոգիին մէջ որ հիմա հրեշտակներու երգեցիկ խումբին մէջաեղը կը բնակի:

ԱՆՈՐ ԱՐԵԱՆ ԶՕՐՈՒԹԵԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

Հայ. Ամերիկայի սպանիական քաղաքի մը մէջ անգլիացի մը ձերբակալուեցաւ խռովութեան մը մասնակցելուն համար, եւ գնդակահար ըլլալու դատապարտուեցաւ:

Ժամը հասաւ, անիկա արդէն վճիռը զործադրող զինուորներուն մէջտեղը կեցած էր և պաշտօնեան «Կրակեցէ՛ք» հրամանը տալու վրայ էր, երբ յանկարծ անգլիացի հիւպատոսը նետուեցաւ դատապարտեալին վրայ եւ անգլիական դրօշը պարզելով անոր վրայ, աղաղակեց, «Եթէ կը համարձակիք, կրակեցէ՛ք»: Դատապարտեալը ազատ արձակուեցաւ եւ անգլիացիներու պաշտպանութեան յանձնուեցաւ:

Այն մեղաւորը որ Յիսուսի կը հաւատայ՝ կը փրկուի եւ Քրիստոս իր արդարութեան հանդերձով կը ծածկէ զայն: «Իսկ արդ դատապարտութիւն չկայ Քրիստոս Յիսուսով եղողներուն»: Անիկայ Յիսուսի պատուական արիւնովը ծախու առնուած է եւ իբր Աստուծոյ մէկ գաւազը Անոր հովանիին ներքեւ կ'ապրի:

Ս. ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻՆ ՊԱՏՄ ՈՒԹԻՒՆԸ

Կանոնը:— Կանոնը Յունարէն բառ մըն է որ կը նշանակէ Հափացոյց գաւազան: Փոխաբերաբար գործածուելով ըսել է կառավարող սկզբունք (Գաղ. 2. 16) երբ Ս. գրութեանց տեղ գործածուի Սր. Մատենանը և դառնայ հաւատքի և կեանքի կանոնը, Հափանիշը: Հին Կտակարանը լոկ հասարակաց ընթերցման յատուկ գրքերու հաւաքածոյ մը չէ, այլ սինակոկին մէջ իբր հեղինակութիւն ճանչցուած Գիրքը: Կանոն կը նշանակէ նաեւ աստուածային ներշնչմամբ վաւերական սեպուղի գրացանկը: Իսկ Սուրբ Գրոց նմանող, բայց ո՛չ ներշնչեալ, թէական կարծեօք ընդունուած գրքեր կը կոչուին «Անկանոն»:

Շատ հետաքրքրական պիտի ըլլար ճշդիւ գիտնալ թէ ի՞նչպէս կազմուեցաւ կանոնը: Դժբաղդաբար հակառակ մեծամեծ ճիշդութեամբ շատ բան չենք գիտեր այդ մասին: Բաց աստի «Բանբեր»-ի սինակները չեն ներեր պատմական խթանաբանութիւններու մէջ մտնել: Արդէն մեր նըպատակն ալ լոկ պարզ գաղափար մը տալ է այս կարեւոր խնդրոյն վրայ, ու չենք ուզեր շեղիլ մեր ուղեգիծէն: Արդ համառօտիւ տեսնենք թէ ինչպէս կազմուեցաւ

Սր. Գրոց Կանոնը

Հին Կտակարանը կը յիշէ «Օրէնքին բոլոր խօսքերը» կազմող հաւաքածոյ մը, որ Տէրոջը Ուխտի տապանակին քով դրուած էր (Բ. Օրին. ԼԱ. 26) Յետեւ Սիւքէմի մէջ ժողովուրդին դրած «Կանոններն ու դատաստանները Աստուծոյ Օրինաց զիրքին մէջ գրեց» Յես. ԻԴ. 25, 26: Սամուէլ մարգարէն «Թագաւորութեան կանոններէն ժողովուրդին զրուցեց, ու զանոնք զրքի մը մէջ գրեց ու Տէրոջը առջեւ դրաւ» Ա. Թագ. Ժ. 25: Աւելի ետքը Քեղկկայ քահանայապետը տաճարին նորոգութեան միջոցին գտաւ Օրինաց Գիրքը և թագաւորին տարաւ (Դ. Թագ. ԻԲ):

Մարգարէական գրութեանքներն ալ շատ կանոնաւոր խնամուած ու միացուած էին, քանի որ էն հին մարգարէներէն մէջը բերումներ կան աւելի ուշ եկող մարգարէներուն գործոցը մէջ: Դարեհի առաջին տարին Դանիէլ երեմիայի մարգարէութեան ուսումնասիրութենէն գիտցաւ թէ Տէրը «70 տարիով պիտի վերջացնէր Երուսաղէ-

մի աւերումները» ուստի արդէն այն ժամանակ կազմուած էին անցեալի մարգարէութեանց «Գրքերը» (Դան. Թ. 1, 2):

Բաց աստի, փառաբանական տաղեր, և Իսրայէլի իր Աստուծոյն ձեռք տարած յաղթութեանց բանաստեղծական էջերը միշտ յարգանքի առարկայ եղած են: Անոնցմէ շատ բան չէ հասած մեզի, միայն կը յիշուին «Տէրոջը պատերազմներուն գիրքը» (Թուոց ԻԱ. 44), «Ուղիղին գիրքը» (Յես. Ժ. 13: Բ. Թագ. Ա. 18) ևն:

Վերջապէս Դաւիթի ու Սողոմոնի ժամանակներէն սկսեալ Սաղմոսաց եւ Առակներու գանազան հաւաքածոներ երեւան եկած են, որոնցմէ յետոյ կազմուեցաւ արդի Սաղմոսացն ու Առակաց գիրքերը: Սաղմոսներն ընդհանրապէս իրենց հեղինակներուն անուններուն տակ հաւաքուած են, ինչ որ կը ցուցնէ թէ ատեն մը Դաւիթի, Ասափի, Կորնի որդեաց եւն սաղմոսներու զատ զատ հաւաքածոներ կային: Առակաց գիրքին բաժանումները ցոյց կուտան թէ չորս անշատ հաւաքածոներու միացումն է Ա. 1, Ժ. 1, ԻԴ. 23, ԻԵ. 1: Չորրորդ վերնագիրը նշանակալից է, «Ասոնք ալ Սողոմոնի առակներն են, զորոնք Յուդայի Եզեկիա թագաւորին մարդիկը օրինակեցին»: Կարելի է հետեւցնել թէ այս առակներուն հաւաքածոն նոյնիսկ պաշտօնական բընոյթ ունէր:

Յարդ միայն զանազան գրութեանց զոյութիւնը հաստատեցինք: Կարելի չէ որոշել թէ Իսրայէլի գերութեան քշուելէն առաջ այս գիրքերը արդէն կը կազմէին օրինական կանոնը: Թէպէտ բաւական դժուար է ստուգել, սակայն հաւանական չթուիր: Յաւէտ գերութեան վերադարձէն ետքն է որ Հ. Կտակարանը կազմող երեք դաս գիրքերը հետզհետէ մէջտեղ կուգան իրենց կանոնական հանգամանքով: Էն առաջ

Մովսէսի Օրինաց Գիրքը

ստացաւ այս իրաւունքը: Անտարակոյս սկիզբէն իսկ ան տրուեցաւ իբր Իսրայէլի հաւատքին ու կեանքին կանոնը: Դժբաղդաբար Իսրայէլ յարձառողեցաւ գործնականին մէջ: Մովսէսէն յետոյ Իսրայէլի պատմութիւնը, իր Աստուծոյն հետ ունեցած պայքարին արձանագրութիւնն է: Դատաւորը, մարգարէն ու թագաւորը իրենց կարգին, մերթ արտայոյզ, մերթ սպառնական շեշտերով հաւատքի և հաւատարմութեան, իր օրէնքին, իր աստուածապաշտութեան կը հրաւիրեն խոտապարանոց ազգը: Ատեն մը այնքան թոյլ էր հոգեւոր կեանքը որ Քեղկկայ քահանայա-

պետը Տաճարին փոշիներէն կը հանէ Օրինաց Գիրքը ի մեծ դարմայուս թագաւորին: Աստուած երբ Բաբելոնեան գերութիւնով զարկաւ Իսրայէլը, իբր պատիժ Իր օրէնքին դէմ գործուած անօրէնութեանց, զգաստացաւ Իսրայէլ: Բաբելոնէն դարձին սրպիսի խնամքով եւ երկիւղածութեամբ կը ժողովուն ու կ'ուսանին ժամանակաւայ այն զանց առնուած ու մոռցուած գիրքերը: Այս նաեւ կարեւոր էր Բաբելոն մնացած Հրէից համար, զի այն օրերուն Օրէնքը իրենց մնացած միակ ազգային սահմանագիծն էր: Բաբելոնէն Եզրաս՝ որ Մովսէսի օրէնքին արագագիւր դպիրն էր, «Իր սիրտը պատրաստեց սրպէսգի Տէրջը օրէնքը փնտռէ ու կատարէ, ու Իսրայէլի մէջ օրէնք ու դատաստան սորվեցնէ» Եզրաս Է. 10: Եզրաս երուսաղէմ կ'ելլէ, քիչ յետոյ Նէեմիա անոր կը հետեւի: ԿԿ Ն. Ք. տաղաւարահարաց տօնին, եօթնեակ մը «Աստուծոյ Օրինաց գիրքը» կարդացուեցաւ, ապա ժողովուրդը մեղաց յուզիչ խոստովանութենէ մը յետոյ Ենովային հետ նոր ուխտ մը կ'ընէ այդ օրինաց հիման վրայ: Այս օրերէն սկսեալ Օրինաց Գիրքը աննախընթաց եւ բացառիկ հեղինակութեան մը կը տիրանայ: Մասնաւոր անձինք՝ դպիրներ եւ օրինաց վարդապետներ պաշտօն ունին սերտելու, ընդօրինակելու գիրքերը, դասական պապենական երբայրէնէն պարտին սովորական բարբառին թարգմանել, սրպէսգի ամէն գնով ժողովուրդին մէջ ընդհանրանայ թէ՛ հասարակական նոր ընթերցումներ ինչպէս նաեւ անոնց սերտողութիւնը դպրոցներու մէջ:

Այս Օրինաց Գիրքը բոլոր Հնդամատեանն է եւ ո՛չ լոկ տանաբանեան կամ ծիսական օրէնքները: Հրէից մէջ «Օրէնքը» կը կոչուէր բոլոր Հընդամատեանը, որուն կեդրոնական գաղափարը Օրէնքը եւ ուխտերն են: Արդարեւ Օրէնքին ընթերցման ի պատասխան Ղեւտացւոց մատուցած սրտառու շնորհքը Հնդամատեանին մէկ բովանդակութեան կը նմանի (Նէեմիա Թ):

Մարգարէական Գիրքերն ալ գերութենէ դարձին սկսան հեղինակութիւն շահիլ: Ազգային մեծ աղէտը պերճախօս ապացոյց մ'ընէր մարգարէական նախագուշակութիւններուն, ուստի ընական էր որ, անոնք ալ խնամով փնտռուէին իբր ներշնչեալ գիրքեր: Այս հոգածութիւնը կրկնապատկուեցաւ երբ լսեց վերջին մարգարէին ձայնը, եւ ո՛չ ոք յաջորդեց անոր: Բնական էր յայնժամ որ տէրունառաք մարգարէից յայտնութիւններն ու գործերը երկիւղած յարգանքով դաստարակէին կանոնական Գրքերու

շարքին: Եզրաս, Թերեւս Նէեմիա անոնցմով փակեցին մարգարէական գիրքերու տասը հատը: Զմոռնանք սակայն որ այս տասը կը պարունակէր, Յեսուայ, Դատաւորաց, Թագաւորաց գիրքերէն զատ, երեք մեծ մարգարէութիւնք ու 12 պատիկներն ալ: (1)

Սուրբ Գրութիւնները

Կը կազմէին Գ. հաւաքածոն եւ անոնցմով փակուեցաւ Հին Կտակարանի կանոնը: Յարգ բաւական անորոշ է անոնց հաւաքոյթին պատմութիւնը: Սաղմոսները, որոնց գոյութեան արդէն ակնարկեցինք, բաժնուած են 3 մասերու: Ուստի կ'ենթադրուի թէ հնգամատեանին իր վերջնական ձեւը առնելէն յետոյ էր որ այդ օրինակին նման կազմուեցան, գերութենէն առաջ կամ վերջը խմբագրուած Սաղմոսները: Տառապանքի, հաւատքի եւ յոյսի անզուգական յիշատակարաններն էին Սաղմոսները Իսրայէլի համար: Հոն կ'երեւի աստուածավախ Հրեային պատասխանը իր Տէր Աստուծոյն կոչերուն: Դանիէլի գիրքը՝ որ այս դասակարգին կը վերաբերէր (1) թանկագին մնացորդ մ'էր, թէ՛ գերութեան անցեալի ցաւալի օրերը յաւերժացնելու, թէ՛ ալ յուսատու մխիթարութիւն մը վերջնական վերահաստատման:

Առական, Երգ Երգոց, Ժողովոյ, որոնք Սաղմոսնի կը վերագրուին, ընդհանուր վստահութեան արժանացան իրենց վստահելի հեղինակին շնորհիւ: Այս դասակարգութիւնն ալ անտարակոյս Եզրասի եւ հաւանաբար Նէեմիայի օգնութեամբ կատարուեցաւ, որոնք նաեւ անոնց վրայ աւելցուցին արդի Եզրաս-Նէեմիա գրքերը կազմող պաշտօնական խմբագրութիւնները: Դարձեալ իբր յիշատակ գերութեան օրերուն եւ ազատութեան պատմութեանը: Այսպէս վերջացած պէտք է ըլլայ վերջին հաւաքածոն եւ Սբ. Գրոց կանոնն ալ փակուած՝ երբ երեւցաւ «Անկանոն Ժողովոյ» գիրքը: Այս գիրքը այնքան լեցուն է Հին Կտակարանի հոգիով որ Հրեայք զայն բոլոր առաքինութեանց գիրքը կը նկատէին եւ անտարակոյս մուտք պիտի դնէին կանոնին մէջ եթէ արդէն գրացանկը... փակուած չըլլա՛ր: «Ըստ ոմանց այս գիրքը գրուած է Գ. դարուն (Ն. Ք.) սկիզբը, ուրիշներու համեմատ (Ն. Ք.) Բ. դարուն առաջին քառորդին մէջ: Եթէ պէտք է քննա-

.....

(1) Եբրայական կանոնին դատաւորման համար տես «Բանբեր» Փետրուար 1932 Հին Կտակարանի պատմութիւնը:

դատներուն մեծամասնութեան հետ ընդունիլ այս վերջին թուականը, կրնանք եզրակացնել ըսելով թէ Մակարայեցիներու ատենին, այսինքն շուրջ 170ին (ն. Ք.) Հին Կտակարանի հաւաքածոն գոյութիւն ունէր զրեթէ մեր ճանչցածին պէս: (1)

Այս շրջանէն ի վեր որոշ եւ գանազան

Պատմական Ապացոյցներ

Կան որք կը հաստատեն թէ կանոնը գոյութիւն ունէր մեր յիշած երեք բաժանումներուն տակ:

Ա. Սուրբ Գրոց Յունարէն «Եօթանասնից թարգմանութիւնը որ Աղէքսանդրիոյ մէջ սկսաւ շուրջ 383ին, կը պարունակէ մեր ունեցած բոլոր գիրքերը: Այս թարգմանութիւնը ցոյց կուտայ թէ բնագիր հաւաքածոն արդէն ատենէ մը ի վեր Հրէից ձեռքին մէջ էր եւ կը վայելէր անձեռնմխելի հեղինակութիւն:

Բ. Ապա մեր ձեռքն ունինք «Անկանոն Ժողովող»ի, Յիսուս Սիրազ (Jésus Sirach)ի գրքին նախաբանը, որ այդ գրքին հեղինակին, Յիսուս Սիրազի թոռանը կողմէ գրուած է: Այս նախաբանը է՛ն ուշը 120 ն. Ք. գրուած է: Հեղինակը հոն կը յիշէ «Օրէնքը», «Մարգարէները», և «Ուրիշ գրողներ որ անոնց հետեւեցան», կը յիշէ թէ ինչպէս իր մեծ հայրը Յիսուս Սիրազ «Երկար ատեն պարապած է օրինաց, մարգարէից և մեր հարց ուրիշ գիրքերը սերտելու»: (2) Ուստի կը հետեւի որ ոչ միայն նախաբանը գրողին օրերուն, այլ նաեւ անոր մեծ հօրը օրերուն իսկ (որ թերեւ 170էն քիչ մը ուշ ալ ըլլայ) կանոնը գէթ իր առաջին երկու մասերուն մէջ բոլորովին իր վերջնական ձեւը առած էր: Իսկ Յրդ հաւաքածոն գոյութիւն ունէր, առանց սակայն ստացած ըլլալու իր վերջնական անունը:

Գ. Փիլոն, Յիսուս Քրիստոսի ժամանակակից փիլիսոփան որ կ'ապրէր Եգիպտոսի մէջ, իր գործերուն մէջ իբր ապացոյց եւ վկայութիւն, միայն կանոնական գիրքերէն հատուածներ կը յիշէ, ինչ որ ցոյց կուտայ թէ ինքն ալ կ'ընդունէր մեր երեք հաւաքածոներուն սրբազան հեղինակութիւնը:

Դ. Բայց ամենէն աչքառու վկայութիւնը նոյն ինքն մեր Տէր Յիսուս Քրիստոսի անձնական եւ նաեւ Նոր Կտակարանին բերած վկայութիւններն են: Ինչպէս իր մահէն առաջ, նոյապէս

ալ յարութիւնէն ետքը, փառաւորեալ Քրիստոս նոյն դրական դիրքը կը բռնէ Հին Կտակարանին հանդէպ: Էմմաուսի ճամբուն վրայ, Մովսէսէ և մարգարէներէն սկսեալ «Կը մեկնէր անոնց ինչ որ Իրեն համար բոլոր գրքերուն մէջ գրուած էր»: Ապա բոլոր հաւաքուած աշակերտաց երևնալով կը շեշտէ թէ, «Պէտք է որ կատարուին այն աւանդ՝ որ Մովսէսի օրէնքին մէջ ու Մարգարէներուն մէջ ու Սաղմոսներուն (Գ. հաւաքածոյին տրուած հաւաքական անունը) մէջ Ինծի համար գրուած են» (Լուկ. ԻԳ. 44):

Նոր Կտակարանին հեղինակները Հինէն մէջբերումներ ընելու պահուն կ'ըսեն «Գրուած է թէ», կամ, «Ինչպէս գիրքը կ'ըսէ» եւն: Հին Կտակարանին գիրքերուն շախշախիչ մեծամասնութիւնը յիշուած են Նոր Կտակարանին մէջ, մինչ Անկանոն գիրքերը տեղ չունին հոն:

Եւ երբ յիշենք թէ յարուցեալ Փրկիչը աշակերտաց մէջ կայնելով նորէն ըսաւ անոնց, «Խաղաղութիւն ձեզի, ինչպէս Հայրը զիս զրկեց, ես ալ ձեզ կը զրկեմ եւ դուք ըսելով անոնց վերայ փչեց, ու ըսաւ անոնց, առէք Հոգի Սուրբ» (Յովհ. Ի. 21, 22). և «Այն ատեն անոնց միաբերը բացաւ որպէսզի գիրքերը հասկնան» (Լուկ. ԻԳ. 45. օրինակ, Գործ, Ա. 15-20): Մենք ալ մեր կարգին կը հասկնանք թէ հակառակ որ Սուրբ Գրոց կազմուածեանը պատմութեան մէջ մեզի անորոշ մնացած մի քանի կէտեր կան, կարելի է ուրախութեամբ եւ երախտագիտութեամբ վստահիլ անոնց անձեռնմխելի հեղինակութեան:

Անոնց համար վկայեց մեր «Հաւատքին առաջնորդը ու կատարողը», «Որ Սրբութեան Հոգիին կողմանէ Որդի Աստուծոյ յայտնուեցաւ, գորութեամբ մեռելներէն յարութիւն առնելով» Հոով. Ա. 4: Վկայեց նաեւ «Ճշմարտութեան Հոգին որ Հօրմէն կ'ելլէ», եւ որ «Ամէն բան կը քննէ, Աստուծոյ խորունկ բաներն ալ»:

Երկու վկաներու հաստատածը բաւարար և ընդունելի է: Շատ յաճախ ալ պատմաբանները որպիսի՝ աննշան եւ թէական տուեալներու վրայ կը հիմնեն իրենց գիտական տեսութիւնները, եւ ուսանողները ստիպուած կ'ընդունին գանոնք առ ի չգոյէ լատազոյն փաստերու:

Բայց Սուրբ Երրորդութեան վկայութիւնը յոյժ թանկագին է ճշմարիտ խուզարկուն: Անոր վկայութիւնը ճշմարիտ, անվիճելի եւ յաւիտեան անհերքելի է: Ալ երկիւղած յարգանքով մօտենանք երկինքէն կնքուած «Աստուծոյ Խօսքին» եւ օրհնենք զԱստուած այս անպատում պարգեւին համար: Զ. Բ. ՊՈԻՏԱՐԵԱՆ

(1) La Bible Annotée 1889 Les livres Historiques I էջ 31

(2) Les livres Apocryphes de l'Ancien Testament 1909 էջ 404

ԳԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՅՐԵՏԵՐԻՔ ՕՊԸՐԼԻՆ

5. Օպերլին եւ մտաւոր զարգացումը.— Ուշիմ աչքերէն չէր կրնար վրիպիլ, թէ քրիստոնէական ոգւոյն համաձայն կատարուած մտաւոր զարգացումը մեծ բարիք մըն է։ Ուստի մեծ ուշադրութիւն դարձուց մանուկներու դաստիարակութեան։ Իր պաշտօնավարութեան ընթացքին իր թեմին ժողովուրդին համար շինել տուաւ վեց դպրատուններ։ Մանկավարժ ուսուցիչներ պատրաստելու համար՝ կարգադրեց որ շարաթը մէկ անգամ իր ներկայութեան փորձի դասեր տեղի ունենան։ Ուսուցիչները կարգաւ կը դասաւանդէին եւ ապա՝ աշակերտներու արձակուելէն ետքը՝ Օպերլին կը քննադատէր եղած սխալները։ Ուսուցիչները քաջալերելու համար՝ տարեկան ճանին անոնց մրցանակներ ալ կուտար՝ իւրաքանչիւր լաւ դաստիարակուած աշակերտի համար մէկ մրցանակ։ Իսկ երբ մէկը տկարամիտ աշակերտ մը լաւ դաստիարակած էր, կրկնապատիկ վարձատրութիւն կը ստանար։ Աշակերտներուն եռանդը հրահարելու համար՝ անոնց ալ փոքր մրցանակներ կուտար։ Այս կերպով Օպերլին յաջողեցաւ Շթայնթալի դպրոցները աշխարհաբար քարտէսէն որ անոնք շրջակայ ժողովուրդին կողմէն իբր տիպար կրթական հաստատութիւն կը նկատուէին։ Փոքր մանուկներուն համար ալ հաստատեց մանկապարտէզներ, ուր աշակերտները կը խաղային, օգտակար պատմութիւններ կը լսէին, երգել, հիւսել, նկարել եւն եւն կը սորվէին։ Այս մանկապարտէզներու հաստատման առիթ տուող պարագան հետեւեալ կերպով կը նկարագրէ մեծ մարդասէր Օպերլինը։ «Եւ կը յիշեմ մայիսեան օր մը, իմ պաշտօնավարութեանս ճիշդ սկիզբը, Պէլմօն գիւղն էի. հոն տեսայ թէ խումբ մը մանուկներ կը վազվառէին իմ շուրջս։ Չկրցի իմ արցունքներս զսպել, երբ տեսայ այդ անտեսուած մանուկները, որոնք տան մէջ աւելի յանդիմանական խօսքերով, հայհոյանքով, անէծքով եւ ծիծով կը կերակրուէին քան թէ անդատու հացով։ Սրտիս խորիքէն խնդրեցի սիրելի Փրկչէն անոնց համար ալ վերատեսուչ մը զրկել»։ Շուտով լսուեցաւ այդ խնդրիքը եւ գտնուեցաւ շատ ընտիր մանկապարտիզպանուհի մը։

Օպերլին հրահարեց նաեւ ժողովուրդի ընթերցասիրութիւնը, ընդհանրացուց ընթերցումը Աստուածաշունչի եւ ուրիշ օգտակար գիրքերու։

Տպել տուաւ զանազան նպատակաշարմար գիրքեր։ Հիմը դրաւ ժողովրդական գրատան մը, որ քիչ ետք 500 օրինակ գիրքեր կը պարունակէր։ Մեր օրերուն մէջ ասոնք շատ բնական բաներ կը թուին։ Բայց 120 տարի առաջ, Օպերլինի օրով նորութիւն էին։

6. Օպերլին իբր հոգեխնամ պաշտօնեայ— Արտակարգօրէն հաւատարիմ սղօթող մըն էր անիկա. իր քահանայական աղօթքի առեւն ունէ մէկը չմոռնալու համար՝ ամէն առաւօտ իր ձեռքը կ'առնէր այն տոմարը որուն մէջ արձանագրուած էին իր համայնքին պատկանող ընտանիքներուն անունները, եւ կը կարդար զայն եւ Տէրոջ առջեւ կը բերէր ամէն մէկ ընտանիքի մասնաւոր կարօտութիւնը։ Իսկ իր խցիկի դրան վրայ կախուած քարեառխտակի մը վրայ ալ կը գրէր անունները այն անձերուն, զորս իր բարեխօսական աղօթքին մէջ մասնաւոր կերպով յիշել կ'ուզէր։

Իր քարոզները շատ պարզ եւ ժողովրդական էին, եւ քաղուած ու ներշնչուած Սուրբ Գիրքէն։ Կը քարոզէր ոչ թէ խօսքերու ճարտարութեամբ, հապա իր մանկական հաւատքին ու Ս. Հոգւոյն զօրութեամբը։ Կիրակին իր հոգեւոր հիանալի պաշտամունքներովը՝ Շթայնթալցիներու համար ներշնչման լուսապայծառ օր մըն էր, որ իր փայլն ու լոյսը կը ձգէր լուր օրերու վրայ։

Իր թեմի ժողովուրդին հոգեւոր պէտքերը լաւ ճանչնալու համար մեծ կարեւորութիւն կուտար այցելութիւններու։ Իր հայրական մտերմիկ վերաբերումովը կրնար ճամբայ գտնել եւ թափանցել ընտանիքներու մասնաւոր դժուարութիւններուն եւ պարագային համաձայն մի քանի զօրաւոր խօսքերով քաջալերել յոյսալքուածները, զգաստացնել մոլորածները եւ մխիթարել սգաւորները։ Իր արտաքին երեւութիւն ու ամբողջ էութեանը մէջ աշխարհ մեծ ազդեցութիւն եւ սէր կար որ, իրաւամբ ըսուած է իրեն համար, «Երբ ան տուն մը մտնէ, կը կարծուի թէ հոն կ'այցելէ Տէրոջ մէկ առաքեալը՝ սիրազեղ հօր մը կերպարանքովը»։

Իր ժողովուրդի հոգեւոր շինութեանն ու յառաջդիմութեանը կը ծառայէին նաեւ իր կրօնական դասաւանդութիւնները, որոնց կը մասնակցէին՝ իրենց սեփական ժամերուն մէջ պատանիները, աշակերտները եւ կիները։ Կիները մէկ կողմէն դասին մտիկ կ'ընէին, իսկ միւս կողմէն կը հիւսէին կամ կը կարէին՝ ազգատներու համար։

Օպերլին իր ժողովուրդին նուիրուելով հանդերձ, չմոռցաւ նաեւ քրիստոնէական գործը հե-

ռաւոր երկիրներու մէջ: Իր կանուխ հասակին մէջ իսկ անիկա միախոնարութեան բարեկամ էր: Լոնտօնի մէջ միախոնարական առաջին ընկերութիւնը հիմնուելէ առաջ (1795), Շթայնթալի մէջ հաւատացեալ աղօթողներ արդէն իրենց ծունկերը կը խոնարհեցնէին ու կ'աղերսէին որ Առաւմտոյ թագաւորութեան հպատակին նաեւ հեռաւոր հեթանոսները:

1774ին Օպլըրլին նոյնիսկ վճռած էր՝ անձամբ հեթանոսներու երթալ և Հիւս. Ամերիկայի Փէնսիլվանիա նահանգին մէջ գտնուող բնիկներու աւետարան քարոզել: Հոգ քսան հազար անձէ բաղկացեալ գերման աւետարանական գաղութ մը կար, որուն մէջէն անձնուէր հաւատացեալ մը իբր միախոնար կը գործէր տեղացի հեթանոսներուն մէջ: Սակայն ան մեռաւ, և գաղութը չէր կրնար անոր յաջորդ մը գտնել: Ուստի Օպլըրլինը հրաւիրեցին այդ գործին համար: Անիկա իր պատրաստակամութիւնը յայտնեց և իր կնոջ հաւանութեամբ ճամբորդութեան համար հարկ եղած պատրաստութիւններն ալ տեսաւ: Բայց մեկնումէն քիչ առաջ պատերազմ հրատարակուեցաւ Ամերիկայի եւ Անգլիոյ միջեւ եւ ատով Օպլըրլին արգելուեցաւ երթալէ եւ մնաց Շթայնթալ: Տէրը այդպէս էր կամեցեր, քանզի Ան գիտէր թէ այդ իր գաւկին գործունէութեան ամենէն յարմար տեղը հոգ էր:

Տ. Օպլըրլինի գործակիցները— ա, իր կինը Մակաւալինէ, որու հետ նա ամուսնացած էր 1768ին: Այս կինը ունէր շատ խորունկ քրիստոնէական հաւատք և մտաւոր բարձր կարողութիւններ: Նէ իւրացուցած էր էրկանը բոլոր փափաքներն ու ծրագիրները եւ անոր մեծ նեցուկ էր քրիստոնէական սիրոյ բոլոր գործերուն մէջ: Բ, Լուիզէ Շէփլըր, տնտեսուհին, որ Օպլըրլինի օգնեց 1779էն սկսեալ 48 տարի: Նէ նախապէս իբր սպասուհի առնուած էր երիցատան մէջ: Սակայն երէցկոնջ մահէն (1783) յետոյ դարձաւ նէ տան մատակարարուհին և Օպլըրլինի գաւակներուն դաստիարակչուհին եւ ծառայեց անոր մեծ հաւատարմութեամբ եւ իմաստութեամբ: Նէ մինչեւ այն ատեն կը վարէր մանկապարտէզը: Նէ այդ ուղղութեամբ կրթութիւն ստացած չէր, սակայն քանի որ մանուկներու հանդէպ մեծ սէր ունէր, եւ բնական տաղանդ մանկավարժական գործերու համար՝ պակասը շուտով դարմանեց:

(Շար.)

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆԱԿ

ԾԱԿՈՒԱԾ ԶԵՌՔԻՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

Անիկա մեր մեղքերուն համար վերաբերուեցաւ...
եւ Անոր վերաբերով մենք բժշկուեցանք:
Եսայ. ԾԳ. 5

Այսպէս լսեցի.—

Ժապ, մանկութենէն իսկ գողնալու շատ գէշ ունակութեան գերի էր: Քանի՜ քանի՜ անգամներ դառնկներու կողմէն ծաղրուած, դրացիներու կողմէ այսպիսուաւ եւ «Գող» կոչուած էր: Քանի՜ քանի՜ անգամներ մայրիկը զայն խրատած, երբեմն ծեծած, յաճախ տանը «Աղօթարան» կոչուած խցիկին մէջ մէկուսի՝ զայն իր գուրգուրատ թեւերուն մէջ ծրարած, ծունկերուն վրայ, տաքուկ կուրծքին սեղմելով՝ աղօթած էր արցունքով, երկա՛ր, շատ երկա՛ր, որ ա՛լ չգողնայ: Ժապ դարձեալ կը գողնար:

Մօրը ծեծերէն եւ կշտամբանքէն զատ, ուսուցիչը որքա՛ն կծու կերպով խայտառակած էր զայն բոլոր աշակերտներուն առջեւ: Կարմրած էր... խոստացած էր ալ երբեք չգողնալ: Ի գո՛ւր: Դարձեալ կը գողնար: Դարձեալ ամէն իրիկուն դպրոցէն տուն դառնալուն՝ մայրը գրպանէն կամ պայուսակէն դուրս կը հանէր առարկաներ՝ որոնք արձակուրդի պահերուն դաստիարակին կը գողնար:

Ի՞նչ պիտի ըլլար Ժապի ապագան... այդ ահաւի սովորութենէն պէտք էր ազատել պըգտիկը: Մայրը կը սառապէր... և այդ ցաւոտ մտմտութեամբ աչքերը թաց, սիրտը կտորած ծունկի եկաւ Աղօթարան-խցիկին մէջ: Լո՛ւտ, Աստուծո՛ւ օգնութեան կ'սպասէր, երբ յանկարծ պատէն կախուած արծաթափայլ խաչելութիւնը իր աչքերը զրաւեց: «Ա՛հ, գտայ, բացազանչեց, վերջապէս գտայ միջոցը... մինչեւ այսօր մարդկային մէթոսներով ուղեցի Ժապ ազատել այդ մահացու ունակութենէն: Անօգո՛ւտ: Հիմա Աստուծոյ մէթոսը պէտք է գործածել: 25° որ ես ալ Աստուծային այդ գերբնական միջոցով միայն ազատեցայ մեղքիս եւ ցած ունակութիւններու շղթաներէն»:

Այդ իրիկուն դպրոցէն արձակուելուն պէս Ժապ կայծակի արագութեամբ տուն մտաւ, պայուսակը կախեց պատէն ու դուրս թռաւ: Ո՛ւր, — ո՛վ գիտէ:

Մայրը, իր սովորութեանը պէս տղուն պայուսակը խառնեց, եւ ահա թանկարժէք զմելի մը: Այս անգամ գիտէր թէ ինչպէս պիտի պատ-

ժէր այդ պատիկ աւագակը: Անհամբեր անոր տուն դռնաւուն կ'սպասէր, երբ յանկարծ գիւղին ամենէն խեղճ պարտիզպաններէն մէկը, սաստիկ բարկութեամբ ներս կը հրէ ժազը ձեռքերը կարմիր թաշկինակով մը ամուր կապած: Ցատուկէն խօսելու անկարող պարտիզպանը աչքերը լուռ կը պահէ գողին վրայ, ապա մօրը, եւ առանց մէկ խօսք ըսելու կը հեռանայ: Օ՛հ, գիւղացիին այդ արհամարհական դիրքը, անոր անաւոր լուսթիւնը, կրակի նայուածքը թունաւոր սլաքներու պէս խոցողեցին մօրը արդէն տրօրուած սիրտը...

Ո՛չ մէկ հարցաքննութիւն: Պէտք ալ չկար: Այդ չար, այդ գող ձեռքերը մաքրելու մէկ միջոց կար: Եւ անա այդ բարձրագոյն նպատակով խորովածի երկաթ ձողը, կրակշատ օճախին մէջ կը կարմրէր... Մայրը սուրբ բարկութեամբ պինդ բռնած ժազի դաստակէն քաշեց զայն կրակարանին առջեւ: Պատիկ գողը գունաթափ, հովէն օրօրուն եղէգի պէս կը դողար վախէն: Մայրը հազիւ կարմրած շամփուրին դպած էր, երբ ժազ լեղապատառ սկսաւ ճշալ, «Չէ, մայրիկ, չե՛մ... չե՛մ... չե՛մ... ալ չե՛մ ըներ, չէ՛...»: Մայրը, արցունքը աչքերուն, երկաթ ձողը ձեռքին մէջ, շատ կտրուկ կերպով խօսեցաւ ժազին, «Գնա, ժազ, ճիշդ հիմա պարտիզպանը գտիր, եւ անոր ձեռքը համբուրելով խոստացիր ա՛լ երբեք չի մօտենալ այդ պարտէզին: Եւ սա զմէկին վաղը կուտաս ընկերոջդ, անկէ ներողութիւն խնդրելով: Ու մի՛ մոռնար որ շամփուրը միշտ կարմրած պիտի մնայ»: Ժազ գլուխը կախ գետ կը սրսրփար հեծկտուքով: Մայրը հեռացաւ: Ժազ գոլորտ ելաւ պարտիզպանը գտնելու...

Օրեր անցան, ու ժազ չէր գողնար: Կարմրած երկաթին սարսափելի յիշատակը զայն կը վախցնէր: Օր մը մատիտ սրելու փայլուն մեքենայ մը գողնալու փորձութեան տակ՝ ժազ այսպէս արամարանեց. — Իրաւ մայրիկս երբեք սուտ չխօսիր, բայց կարելի՞ է արդեօք որ կարմրած երկաթով ձեռքս ծակելու չափ անզուրկ գտնուի... չէ՛, չեմ հաւատար... բայց եթէ ծակէ՛... Ինքն իր դէմ խօսելով հեռացաւ փորձութեան վայրէն:

Ժամանակ մը վերջ կարմրած երկաթին վախն ու յիշատակը գրեթէ ջնջուած էր ժազի սրտէն, եւ նա փորձութեան մը պահուն պարտուեցաւ:

Մայրը՝ տղուն խոստումին վստահ, ալ երբեք չէր խուզարկեր ոչ անոր գրպանը ոչ ալ պայուսակը. Օր մը երբ նստած զաս կը սերտէր

մօրը բարի թեւերուն տակ, յանկարծ ներս մըտաւ գիւղին նշանաւոր ընտանիքներէն տիկին մը, իր պատիկ աղջկան ձեռքէն բռնած: Գանդատի եկած էր կինը, ոսկի շղթայով գեղեցիկ խաչի մը կորուստին համար, որը խաղի ժամանակ, աղջնակը ուրիշ առարկաներով մէկտեղ՝ թաշկինակով մը ծրարած դրած էր խաղարանին նրստարաններէն մէկուն վրայ, եւ կը կարծուէր թէ գողը ժազը ըլլալու է: Մայրը գլխէն զարնուածի պէս յանկարծ ցնցուեցաւ: Ապա, «Ի՞նչ անալ սկսար ժազ...», խօսքը տղուն յարելով՝ սկսաւ անոր զրպանները եւ պայուսակը պրպտել: Ոչինչ գտաւ. եւ ուստի ներքին սենեակը մտցնելով զայն, սկսաւ մերկացնել: Մինչ կօշիկները եւ գուլպաները հանելու կ'ըբաղէր, սրունքին վրայ պինդ մը կապուած գտնուեցաւ խաչը ոսկի շղթայով: Օ՛, ծանր վայրկեան... մայրը ամօթէն կարմրած եւ ներքին ցաւէն աչքերը լեցուած, խաչը յանձնեց տիկնոջ, եւ իր խօսքին հաւատարիմ՝ շամփուրը կրակին վրայ դրաւ: Գնաց տղան գոլորտ քաշեց կրակարանին առջեւ: Տիկինը ապշած կ'սպասէր թէ ի՛նչ պիտի պատահի: Երբ մայրը ժազի դաստակէն սեղմ բռնած՝ կարմրած երկաթը կրակէն վերցուց, տիկինը վազեց զայն արգիլելու: Ժազ կ'աղաղակէր ձեռքերը պինդ խփած եւ ստքերը գետին զարնելով... Մայրը լուռ, առանց վարանումի թողուց տղուն ձեռքը, եւ հեծկտուքէն խղղուած ձայնով ըսաւ, «Ժազ... զաւակս... որպէսզի ես խօսքիս տէրը ըլլամ եւ դուն այդ անոնի սովորութենէն ազատիս, պէտք է այդ գողցող ձեռքերդ ծակուին... բայց որովհետեւ պատիկ ես, եւ պատիժը կրելու կարողութենէդ վեր՝ անա քու տեղդ՝ քեզ մեծցնող այս ձեռքս կը ծակեմ...» եւ մայրը կարմրած երկաթը կոխեց իր ձեռքին մէջ: Սուր ճիչ մը... եւ երբ նուաղած գետին պիտի փոռէր մայրը, տիկինը հտեւէն պրկեց հերոսուհին իր թեւերուն մէջ...

Երբ արթնցաւ, ցաւի քրտինքէն թաց գլուխը իր վրայ արտասուող բարի տիկնոջ ծունկերուն վրայ գտաւ: Ժազն ալ ոտքերուն փաթթելած կը հեծկտար, «Մ'ա՛յր... մա՛յր... ալ երբեք... երբեք պիտի չգողնամ...»

Ժաք ալ երբեք չգողցաւ: Ու շատ չանցած մօրը ծակուած ձեռքին խորունկ նշանակութիւնը հասկնալով, երկաթ ձողը ձեռքին, Յիսուս Բրիտանոսի խաչին ամենաօրհնեալ վկաներէն մէկը դարձաւ:

Յիսուսի խաչելութեան այս կենդանի եւ հոգեցունց մանրանկարը՝ հայելի մըն է սիրելի ըն-

թերցող, որուն մէջ կ'արտացոլան երկու սրտ խորհրդատիպեր.— Ժապ՝ ներկայացուցիչը մեղաւոր եւ մահապարտ մարդկութեան: Մայրը՝ անբացատրելի սիրով, «Աշխարհի մեղքը վերցնող Աստուծոյ Գառին»:

Ու հիմա հարցնեմ քեզի սիրելիս, ինծի հեղձուն ալ այս հայելիին մէջ կը տեսնե՞ս կերքերով շղթայուած, մեղքի գերի քու հոգիդ՝ որ Աստուծոյ սուրբ արդարութեան անխուսափելի դատապարտութեան տակ կը տուայտի՞... «Ի՞նչ խղճալի մարդ եմ ես...»: հոս նոյն հայելիին մէջ կը տեսնե՞ս քու փրկութեանդ համար իր Որդին զոհող Աստուծոյ անհուն սէրը: Քու մեղքերուդ տակ արիւն քրտնող Փրկչիդ տառապանքը...: Տե՛ս, մեր պիղծ խորհուրդներով լեցուն գլխուն տեղ՝ իր արդար գլուխը փռելէն կը ծակծկեն: Տե՛ս, մեր ապտակուելիք երեսներուն տեղ՝ Անոր սուրբ երեսը կը թքեն ու կ'ապտակեն: Տե՛ս, մեր ազտոտ շրթունքներուն լեզիով խառնուած քացախը խմցնելու տեղ՝ Անոր մեղրածոր շրթներուն կը խմցնեն: Գաւազանի արժանի մեր կոնակին տեղ՝ Իրենը կը ծեծեն: Անօրէնութեան գործիք եղող մեր ձեռքերուն եւ ոտքերուն տեղ՝ Անոր կենսատու ձեռքերն ու ոտքերը կը ծակեն, անէծքի փայտին կը դամեն: Մեղքի ահ, Սատանայի, աշխարհի եւ եսի բոյն եղող մեր սըրտերուն տեղ՝ Անոր կենսաբուղի կողը կը պատռեն...: Եւ հիմա սիրելիս, ճիշդ հիմա Ժապի պէս փաթթուիր Անոր ոտքերուն, եւ թովմասի պէս ազադակէ, «Իմ Տէրս եւ իմ Աստուծոս»:

ՀԱՆՆԵԼՈՒԿ

Եթէ հետեւեալ հանելուկը շիտակ լուծուելու ըլլա՞յ, գտնուելիք բառերուն սկզբնատառերը եւ վերջին տառերը պիտի կազմեն խօսք մը որ ըսուած է Սիրոյ նկատմամբ որ կը գտնուի Ս. Կոր. ԺԳ. 7ի մէջ:

- 1—Յիսուս գործածեց իր յաղթական մուտքին առթիւ:
- 2—Սիմէոն կոչեց Յիսուսը իր գիրկը առած պահուն:
- 3—Բառ մը, զոր պիտի դռնէիր Բ. Օրին. ԻՆ. 4 համարին մէջ:
- 4—Ծանօթ կին մը Հին Կտակարանէն:
- 5—Բան մը որ Իսրայէլացիներուն հրամայուած էր ուտել Զատիկի առթիւ:
- 6—Մարդ մը որ մեծ ծառայութիւն մը մատուց Աստուծոյ մէկ մեծ ծառային:

7—Տեղ մը ուր Յիսուս գործեց իր ամենամեծ հրաշքներէն մին:

8—Բառ մը զոր Յիսուս գործածեց իր ամենաքաղցր հրաւերներէն մէկին մէջ:

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱՐՍԷՅԼ.— Յունուար 41ի իրիկունը մեր եկեղեցիին համար նշանակալից էր: Այդ իրիկունը յատկացուած էր մեր եղբայրներէն Պ. Ներսէս Խաչատուրեանի ողջերթին: Խաչատուրեան եղբայր, արդէն ծանօթ է «Բանբեր»ի ընթերցողներէն ոմանց անձնապէս եւ ոմանց ալ իր վեկայութիւնովը:

Հակառակ շատ աննպաստ տեղատարափի մը, հոգեւոր եղբայրներու եւ քոյրերու խումբ մը զինք ջերմօրէն շրջապատած էին: Ներկայ էր նաեւ Սամուէլ եղբ. Պաղպալեան՝ իր ուսանող ընկերներէն մին, որ Մարսէյլի մօտ, Լասիօթայի մէջ կը բնակի: Երկու եղբայրներուն ալ պատեհութիւն տրուեցաւ, ու անոնք ներկայացուցին իրենց կոչման գիտակցութիւնը եւ գիտակցութեան հասնելու աստիճանները, թէ ի՞նչպէս Տէրը իրենց հետ խօսեցաւ այս անցեալ երեք տարիներու միջոցին:

Երկու եղբայրներուն այդ կենդանի վկայութիւնը մեծ ուրախութիւն եւ յուզում երեսուն բերաւ զանոնք սիրող այդ խումբին մէջ, որոնցմէ շատեր խօսք առին մէյմէկ Ս. Գրական համար տալով Ներսէս եղբոր որպէս հրաժեշտի ողջոյն, ուրիշներ ալ սրտառուչ աղօթքներ բարձրացուցին Յաւիտեանս Կենդանի եղողին, զանիկա իր հովանաւորութեան տակ առնելով տանելու եւ գործածելու զայն իր ուղած տեղին մէջ:

Ներսէս եղբայր Յունուար 13ին նաւով մեկնեցաւ Սուրիա:

Մարսէյլի Հայ Աւետ. Եկեղեցիին կրկին ուրախութեան եւ զոհաբանական ձայներ բարձրացուց առ Աստուած, որ այս անցեալ տարիներուն մէջ մեզի առատապէս այցելելով, նոյն այդ այցելութեանց շրջանին զբաւ հինգ երիտասարդներու սրտին մէջ փափաք, բոլորովին իր գործին նուիրուելու: Ասոնցմէ չորսը Ֆրանսայի այլեայլ եկեղեցիներուն մէջ որպէս հոգևոր հովիւ կը գործեն, իսկ հինգերորդը կ'երթայ որպէս միսիոնար ծառայելու ուրիշ երկրի մը մէջ:

Կ'աղօթենք որ Տէրը զանոնք պտղատու ծառեր ընէ Իի պարտէզին մէջ:

ՆԵՐԿԱՅ ՄԸ